

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Բանահյուսության տեսության և պատմության բաժին,
Հայ բանահյուսության տեքստաբանության բաժին

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ – 180

(2021 թ. ապրիլի 29-30)

ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ
ԾՆՆԴՅԱՆ 180-ԱՄՅԱԿԻՆ

ԾՐԱԳԻՐ ԵՒ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Զեկուցումների տևողությունը՝ 15 րոպե, հարցերի համար՝ 5 րոպե

Առաջին օր
ապրիլի 29 (հինգշաբթի)

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

նիստավար՝ Պավել Ավետիսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ.
ժ. 10:00 - 12:30

Յուրի Սուվարյան, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակագիտության բաժանմունքի
ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս, տ.գ.դ.
Ողջույնի խոսք

Պավել Ավետիսյան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ.
Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցի հնագիտական պրպտումների մասին

Վարդան Դևրիկյան, ՀՀ ԳԱԱ ԳԻ տնօրեն, Բ.գ.դ.
Հայ գրականության պատմության հարցերը Գ. Սրվանձտյանցի գործերում

Վիկտոր Կատվայան, ՀՀ ԳԱԱ ԼԻ տնօրեն, Բ.գ.դ.
Գարեգին Սրվանձտյանցը և բարբառային հայերենը

Ազատ Եղիազարյան, Բ.գ.դ. (ՀՌՍՀ)
«Մասնա ծոեր» էպոսի հայտնագործումը և Գարեգին Սրվանձտյանցը

Արմեն Պետրոսյան, բ.գ.դ. (ՀԱԻ)

Գ. Սրվանձտյանցի գրառած «Սասունցի Դավիթ կամ Մհերի Դուռ» պատումը և Միիր-Մհերի կերպարը

Արուսյակ Սահակյան, բ.գ.թ. (ՀԱԻ)

Գարեգին Սրվանձտյանցի տեղն ու դերը հայ բանավոր ավանդների ուսումնասիրման գործում

Մուսաննա Հովհաննիսյան, բ.գ.դ. (ԳԻ)

Գարեգին Սրվանձտյանը՝ Հովհաննես Թումանյանի բանահյուսական ակունքների մշակման շրջագծում

Թամար Հայրապետյան, բ.գ.դ (ՀԱԻ)

Գարեգին Սրվանձտյանցի բանահավաքչական-բանագիտական գործունեությունը

ՄՐՃԱԴԱԴԱԴ Ժ. 12:30 - 12:50

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

նիստավար՝ Ազատ Եղիազարյան, բ.գ.դ.

Ժ. 12:50 - 14:30

Տորք Դալայան, բ.գ.թ. (ՀԱԻ)

Թոնիրի առասպելային Գ. Սրվանձտյանցի գրառումներում

Սիմոն Հմայակյան, բ.գ.թ., Ինեսսա Հովսեփյան (ՀԱԻ)

Շիրինի կերպարը Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց...» աշխատությունում և այլ ժողովրդագրական նյութերում

Նվարդ Վարդանյան, բ.գ.թ. (ԵՊՀ / ՀԱԻ)

Գ. Սրվանձտյանցը որպես հարսանեկան երգերի գրառող

Հասմիկ Գալստյան (ՀԱԻ)

Գ. Սրվանձտյանցը որպես դիվական ոգիների մասին ավանդազրույցների բանասաց և բանահավաք

Կարեն Հովհաննիսյան, պ.գ.թ. (ՀԱԻ)

«Թուխ մանուկ» սրբավայրի էությունն ըստ Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցի

ԸՆԴՄԻՋՈՒՄ Ժ. 14:30 - 15:30

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

նիստավար՝ Թամար Հայրապետյան, ք.գ.դ., դոցենտ
ժ. 15:30 - 17:10

Հասմիկ Մատիկյան, ք.գ.թ. (ՇՀՀԿ)

Գարեգին Սրվանձտյանցի՝ մանկանց հասցեագրված բանահյուսական պատառիկները
(ժողովրդական և բանահյուսական նյութի համադրությամբ)

Սերգեյ Վարդանյան, ք.գ.թ. (ՀԱԻ)

Գարեգին Սրվանձտյանցի գրառած՝ Համշենի բարբառով ժողովրդական երգերը

Հայկանուշ Մեսրոպյան, ք.գ.դ. (ԼԻ)

Գ. Սրվանձտյանցը որպես արևմտահայ բարբառների ուսումնասիրող

Աննա Պողոսյան (ՀԱԻ)

Գարեգին Սրվանձտյանցը՝ «Ռուստամ Զալ» վեպի առաջին գրառող

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ժ. 17:10 - 17:30

Երկրորդ օր

ապրիլի 30 (ուրբաթ)

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

նիստավար՝ Վարդան Դերիկյան, ք.գ.դ.

ժ. 10:00 - 11:40

Լիլիթ Սիմոնյան, պ.գ.թ. (ՀԱԻ)

Արդյո՞ք Գ. Սրվանձտյանցն է «Մշոյ աշխարհ» հողվածաշարի հեղինակը

Հերիքնազ Որսկանյան, ք.գ.թ. (ԳԻ)

Միջնադարյան ազատագրական լեզենդի ժողովրդական տարբերակները

Գ.Սրվանձտյանցի գրառումներում

Լուսինե Վարդանյան, ք.գ.թ. (ԳԻ)

Գ. Սրվանձտյանցի երկու պատմական թատերգությունները

Ալինա Կիրակոսյան (ՀԱԻ)

Գ. Սրվանձտյանցի կենսամատենագիտությունը

Լուսինե Հայրիյան, ք.գ.թ. (ՀԱԻ)
Ժամանակակիցների արձագանքը Գ. Սրվանձտյանցի բանագիտական և
բանահավաքչական գործունեության վերաբերյալ

ՄՐՃԱԴԱԴԱԴ ժ. 11:40 - 11:50

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

նիստավար՝ Հասմիկ Գալստյան
ժ. 11:50 - 13:10

Լուսինե Ղռեջյան, ք.գ.թ. (ՀԱԻ/ԳՊՀ)
Կարճասույթ բանաձևային կառույցները Գ. Սրվանձտյանցի գրառուժներում

Էսթեր Խեմչյան, ք.գ.թ. (ՀԱԻ)
Կայուն բանաձևները Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթներում

Յակոբ Չոլաքեան, պ.գ.դ. (ՀԱԻ)
Գարեգին Սրուանձտեանցի գրառած «Բիրապատիկը» հեքիաթին քանի մը
տարբերակները

Գոհար Մելիքյան, ք.գ.թ. (ՀԱԻ)
Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթների տարբերակները նույն ժամանակաշրջանի
ռուսական աղբյուրներում

ԸՆԴՄԻՋՈՒՄ ժ. 13:10 - 14:30

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

նիստավար՝ Նվարդ Վարդանյան, ք.գ.թ.
ժ. 14:30 - 16:00

Մարինե Խեմչյան, ք.գ.թ. (ՀԱԻ)
Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթների նվիրատու և խորհրդատու կերպարները՝
հայ ժողովրդական և միջազգային հեքիաթների համատեքստում

Անժելա Ամիրխանյան (ՀԱԻ)
Բույսերի մասին տեղեկությունները Գ. Սրվանձտյանցի աշխատություններում

Պետրոս Դեմիրճյան, ք.գ.դ. (ԳԻ)
Արաբկիրի նկարագրությունն՝ ըստ Գ. Սրվանձտյանցի

Միրանույշ-Նոանե Առաքելյան (ՀԱԻ)
Արևմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական վիճակը Գարեգին
Սրվանձտյանցի երկերում (19-րդ դ. երկրորդ կես)

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՒ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓՈՒՄ
Ժ. 16:00 - 17:00

Հապավումներ

ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԻ	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ԳՊՀ	Գավառի պետական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ԼԻ	ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
ԼՀԳ	Լրաբեր հասարակական գիտությունների
ՀԱԻ	ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՌՍՀ	Հայ-ռուսական սլավոնական համալսարան
ՇՀՀԿ	ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՊԲՀ	Պատմաբանասիրական հանդես

ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Անժելա Ամիրխանյան (ՀԱԻ)

ԲՈՒՅՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Գ. ՍՐՎԱՆԶՏՅԱՆՑԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ իրականության մեջ Գ. Սրվանձտյանցն առաջիններից էր, որ կարևորեց բուսական աշխարհի ուսումնասիրությունը և մեծարժեք ազգագրական ու բանահյուսական նյութեր հավաքեց ու հրատարակեց իր «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ» (1874 թ.), «Մանանայ» (1876 թ.), «Համով-հոտով» (1884 թ.) աշխատություններում: Դրանով նա կորստից փրկեց հայ ժողովրդի ավանդական մշակույթի կարևորագույն մի շերտ, որն առնչվում է բուսանուններին, ինչպես և բույսերի կիրառության ոլորտներին ու եղանակներին, դրանց շուրջ ստեղծված բանահյուսական պատումներին: Նրա դերը մեծ էր նաև այն առումով, որ այս կարևորագույն ոլորտի ուսումնասիրության հիմք դրեց՝ նկատելով այն հիմնական ուղղությունները, որոնք հետագայում էթնոբուսաբանության

մեջ դարձան կարևոր գիտաճյուղեր (էթնոլեզվաբանություն, բժշկական մարդաբանություն ևն):

«Բուսոց անուններ» բառարանից բացի, Գ. Սրվանձտյանը բույսերի մասին գրել է ինչպես «Բառարան» և «Բառեր», այնպես էլ իր մյուս աշխատություններում: Բույսերին վերաբերող տեղեկություններ նա հաղորդում է նաև տնտեսությանը, կենցաղին, բնաշխարհին վերաբերող տարբեր առիթներով:

Բույսերի մասին Գ. Սրվանձտյանի հավաքած ազգագրական ու բանահյուսական նյութերը հիմնականում վերաբերում են Վասպուրականին, Տարոնին և Արարատյան դաշտին: Այդ տեղեկությունները գիտական ուսումնասիրությունների համար կարևոր սկզբնաղբյուր են հետևյալ առումներով.

- Բույսերի բարբառային անվանումներ, որոնք լեզվի մեծագույն հարստությունը լինելուց բացի, նաև լեզվաբանական, ազգագրական և մշակութաբանական ուսումնասիրությունների առարկա են:
- Բույսերի կիրառությունն ուտեստում. պասին և ուտիսին գործածվող բույսեր, ձիթատու, համեմունքային, պահածոյացվող բույսեր:
- Բույսերի կիրառությունը տնտեսական կենցաղում (ներկեր, խեժեր, օձառ պատրաստելու համար, որպես անասնակեր գործածվող բույսեր):
- Բույսերի (լոշտակ, համասփյուռ, թորթիկ ևն) կիրառությունը ժողովրդական բժշկության մեջ:
- Բույսերին առնչվող հավատալիքներ, որոնք արտացոլվել են աղոթքներում, հանելուկներում, երգերում, հեքիաթներում և ավանդազրույցներում:
- Բույսերի հավաքչություն. սեռատարիքային խմբեր, բույսեր հավաքելու ժամանակը և եղանակը, հավաքչության համար անհրաժեշտ պարագաներ:

Միրանույշ-Նոանե Առաքելյան (ՀԱԻ)

ԱՐԵՒՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԵՐԿԵՐՈՒՄ (19-րդ դ. 2-րդ կես)

Ուսումնասիրությունն ընդգրկում է Գարեգին Սրվանձտյանի երկերի երկրորդ հատորը, ուր ամփոփված են նրա հոդվածները, տեղեկագրերն ու նամակները, որոնց մեծ մասը դեռ իր ողջության օրոք տպագրվել է «Արծուի Վասպուրական», «Արծուիկ Տարօնոյ» և այլ պարբերականներում և ներկայացնում է 19-րդ դարի 2-րդ կեսի Արևմտյան Հայաստանի և արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակը:

Այս ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի հայաբնակ գավառներում թուրքական կառավարության թույլտվությամբ և անմիջական մասնակցությամբ առավել ուժգնանում են հարկահավաքությունը և հայերի դեմ տարատեսակ բռնություններն ու խոշտանգումները, որոնք ուղեկցվում էին հայերի ունեզրկմամբ: Արևմտյան Հայաստանն, ըստ էության, բաժանված էր երկու մասի՝ թրքահպատակ և քրդահպատակ մասերի: Թրքահպատակ շրջանների հայությունը հարկեր էր վճարում պետությանը և թուրք հողատերերին, քրդահպատակ շրջաններում՝ պետությանը, քուրդ խաներին, բեկերին և քուրդ հողատերերին: Առավել ծանր էր քրդահպատակ շրջանների հայության վիճակը. պետության վերահսկողությունից դուրս եկած քուրդ ավազակապետերն

անխղճորեն թալանում ու սպանում էին իրենց հպատակ հայերին, ինչը շարունակաբար ուղեկցվում էր բռնի կրոնափոխությամբ և շինականների ճորտացումով: Ուժգնացող հարստահարությունները, անվտանգության բացակայությունը՝ քաղաքներում ու մասնավորապես գյուղերում ապրող հայերի մի մասին ստիպում էր գաղթել առավել ապահով վայրեր, իսկ չունևոր ընտանիքիների տղամարդիկ բռնում էին դեպի մեծ քաղաքներ՝ մասնավորապես Կ. Պոլիս պանդխտելու ուղին:

19-րդ դարի երկրորդ կեսին արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր ու անմխիթար վիճակը խիստ մտահոգում էր Հայոց Եկեղեցուն: Հարստահարվող հայության համար անվտանգության ապահովման վերջին հույսը դարձել էին նվիրյալ հոգևորականները: Նրանցից էր Գարեգին Սրվանձտյանցը, ով իր հողվածներում, տեղեկագրերում ու նամակներում անվախորեն բարձրաձայնել է տեղի ունեցողը՝ չվախենալով նաև պատճառները ներկայացնելուց և լուծուժներ առաջարկելուց: Իր դիտարկումներում Սրվանձտյանցը կարևորում է կրթությունն ու ազգային ինքնության ճանաչողությունը՝ իբրև ազգի հարատևման կենսական գործոն: Նա կրթության հիմքում նախ և առաջ դնում է հարգանքը սեփական անձի, ունեցվածքի, ազատության, իրավունքների նկատմամբ, ինչը համարում է կարևոր՝ թուրքի, քրդի, ղզլբաշի ու պետական այրերի ոտնձգություններին զոհ չդառնալու համար. «...մենք հավ չենք. մենք էլ մարդ ու մարդու զավակ ենք. Հայ ու Հայու ժառանգ ենք...» (Երկեր, հ. 2, էջ 44): Սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական և այլ վիճակների բարելավման հիմքում Սրվանձտյանցը դնում է գիտելիքը, ընկերության ոգին, որը հնարավոր է ապահովել միայն լիարժեք ու որակյալ կրթությամբ գաղափարակիր ու լուսավորյալ սերունդներ կրթելով՝ հավասար կրթություն ապահովելով թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար:

Կրթություն և զենք՝ ահա այն կռվանները, որոնք մատնացույց է անում Սրվանձտյանցը հայրենապահպանության և հայապահպանության համար՝ շեշտը դնելով հայերի միակամ, միաբռունցք լինելու և ազգային միասնական շահի գիտակցության վրա:

Պավել Ավետիսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսն իրավամբ կարելի է համարել հայ հասարակական-քաղաքական, գիտա-մշակութային կյանքի վերածննդի ու զարթոնքի ժամանակաշրջան: Այդ տարիներին, մեկը մյուսի ետևից, հրապարակ էկան երևելի ուսումնասիրողներ և ուսումնասիրություններ, որոնք էլ, ըստ էության, դարձան հայագիտության ձևավորման առհավատյան: Հենց այդ ժամանակներից էլ առաջին քայլերն էին արվում հայոց պատմա-մշակութային ժառանգության ուսումնասիրությունների ոլորտում: Եւ այդ առաջին քայլերն անողներից մեկը Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցն էր: Հնությունների և հնագիտական արժեքների հետ պատանի Սրվանձտյանցը շփվել է դեռևս Վարազավանքի ժառանգավորաց վարժարանում սովորելու տարիներին: 1858 թ. Խրիմյան Հայրիկը Վարազավանքում սաների, այդ թվում՝ Սրվանձտյանցի մասնակցությամբ, ստեղծեց հնությունների փոքրիկ մի թանգարան: Շատ կարճ

Ժամանակ գործած այս թանգարանը Հայաստանյան թանգարանների առաջնեկը պետք է դիտվի: Վարագավանքի թանգարանի փորձառության հիման վրա էր, որ 1896 թ. Խրիմյան Հայրիկն Էջմիածնում հիմնադրեց թանգարան (ներկայիս Մայր Աթոռի Խրիմյան թանգարանը), որտեղ հավաքվեցին հնագիտական իրեր, դրամական հարուստ հավաքածուներ, վիմագրեր ևն:

Հատկանշական է, որ Վարագավանքում վերահրատարակված «Արծուի Վասպուրական» շաբաթաթերթի էջերում լույս տեսած հոդվածաշարերում ազգապահպանության խնդիրների մեջ Սրվանձտյանցն առանձնահատուկ դեր է հատկացրել պատմամշակութային ժառանգությանը՝ նշելով, որ «Նախնեաց յիշատակներ այնչափ մեծ արդիւնք ունին, որ ազգութիւն այնու հաստատ կ'եսայ...» («Արծուի Վասպուրական», 1861, հ. Դ, թիւ 2, էջ 57): Շրջագայելով Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ տարբեր ազգագավառներում՝ Սրվանձտյանցը հավաքել է բազմաթիվ տեղեկություններ հնագիտական հուշարձանների և պատմական հնությունների վերաբերյալ: Այսպես, «Գրոց ու բրոց...»-ի (1874 թ.) ԺԳ գլխում նկարագրում է հնագիտական մի հնավայր Վանի շրջանի Դուլաշեն գյուղի մոտ, որի մասին մեջբերում է տեղական ավանդազրույցն այն մասին, թե այդ հողային բլուրը, որը կոչվում էր «Շեղջա դարը», ժամանակին եղել է մի ժլատ կավածատիրոջ ցորենի հսկայական կույտը՝ շեղջը: Մեկ այլ տեղ խոսում է Հայոց-ձոր գավառի մասին, ուր տեղի էր ունեցել Հայկի ու Բեյի առասպելական մենամարտը, և նշում է Հայկ (Խեկ) ու Աստուածաշեն գյուղերի մասին. վերջինիս մոտ նկարագրում է «մի հնաշեն բերդաձև մեծ բլուր..., որոյ վրան գեղին ուլերը կ'արածան այսօր. և քանի մը տարի յառաջ ուլարած մանկտին մի քանի հատ երկաթէ նետի գլուխներ գտած էին, զորս գեղացիները իրենց խոփ և գերանդի շինել տուած էին» (գլուխ ԼԲ): Գիտակցելով, որ այդ բլուրը վաղեմի հնավայր է՝ ենթադրում է, թե այն հավանաբար «Հայկի դաստակերտ ամրոցն է»: ԺԴ գլխում Սրվանձտյանցը խոսում է Վանից ոչ հեռու գտնվող Լեզք գյուղի հնությունների մասին. այս գյուղը նշանավոր էր Արա Գեղեցիկի և արալեզների առասպելի հետ ունեցած իր առնչությամբ: Սրվանձտյանցը նշում է այդ տարածքում հնագիտական պեղումներ կատարելու անհրաժեշտության և կարևորության մասին՝ գրելով, որ նույնիսկ հողի մակերեսին բազմաթիվ սեպագիր արձանագրությունների բեկորներ կան. «Ուր բնեռագիրերով քարեր լեցուն են. և ձուլածոյ հին պղնձէ կենդանեաց փոքրիկ արձաններ գտնուեցան մեր օրերը դեռևս քանի մը տարի յառաջ: Ուր և ինչէ՛ր կան, եթէ Լեզքայ բերդիկը և անոր ստորոտները փորուին, քննուին»:

«Գրոց ու բրոց...»-ի ԻԴ գլխում Սրվանձտյանցը խոսում է քարայրների և նրանց ուսումնասիրության կարևորության մասին՝ հնագույն մարդկանց պատմությունն ու մշակույթը վերականգնելու տեսանկյունից: Քարանձափներն, ըստ Սրվանձտյանցի, «գրեթէ Հայաստանի ամեն գաւառներու մէջ լցուն են: Այրեր, որոնք ո՛վ գիտէ ո՛ր դարու յիշատակները և կեանքի ու դէպքերու պատմութեան ի՞նչ թանկ ու հետաքրքրական գանձեր ունին թագուցած իրենց մէջ, որք կը փսան անհետազօտելի: Այս տեսակ այրերէն շատը բնական եղած կը թուին. շատեր ալ կան, որոնց մէջ կռաններու հետքը կը նշմարուի»:

Առանձնապես հետաքրքիր են տարբեր դարաշրջանների դամբարանների նկարագրությունները: Մասնավորապես «Մանանայ» ժողովածուում (1876 թ.)

Սրվանձտյանցը խիստ կարևոր տեղեկություններ է տալիս կենդանակերպ գերեզմանակոթողների մասին. «Հայաստանի մեջ դեռ կան շատ գեղեր, իմ տեսածներես Խնուսա Գարաշոբան գեղին և Բաբերդու Բալախոբ գեղին տապանաքարերը ոչ տնկուած խաչքար են և ոչ պատկեցուցած կափարիչ, այլ խոյաձև, ձիաձև, առիծաձև, ցլաձև հսկայ քարեր, որոց կողերու վրայ սուր, տապար, հրացան, և այլն քանդակուած» (Երկեր, հ. 1, էջ 178): «Գրոց ու բրոց...»-ի Ի գլխում պատմում է Խնուսի շրջանում գտնվող մոտ քառասուն խաչքար-մահարձաններով գերեզմանոցի մասին, որը կոչվում էր Խրոխլար. «ամեն մեկ գերեզմանի երկայնութիւնը քսան կանգունի կը չափեն: Ասոնք ալ իրենց վեպն ունին, բայց ես ձեռնհաս չեղայ հաւաքելու»: Նույն գլխում պատմում է Խնուսի Խըրթ գյուղի մոտ գտնվող՝ ուշագրավ մի գերեզմանի մասին, որը գտնվում էր մի աղբյուրի ավազանի մեջտեղում՝ «երկու կանգուն բարձրութեամբ և հինգ կանգուն երկարութեամբ, քարով և հողով բռնուած և հողերու մեջ վարդի թփեր տնկուած. ջուրն ելած ժամանակ այդ գերեզմանը կը շրջապատէ լճակաձև, և շիրիմը կը դառնայ կղզի մը անոր մեջ»: Հայերն այդ գերեզմանը կոչում էին Քառսուն մանկունք անունով, իսկ քրդերը՝ Հալիլ բաբա: Սրվանձտյանցը մեջբերում է այդ աղբյուրին ու գերեզմանին վերաբերող ավանդազրույցը և վերջում ենթադրում, որ Քառսուն մանկունքը հնում կարող էր կոչված լինել «Քառսուն ակունք»:

«Գրոց ու բրոց...»-ի ԼԴ գլխում Սրվանձտյանցը խոսում է այն խաչարձանների մասին, որոնք ոչ թե գերեզմանների վրա տեղադրված մահակոթողներ են, այլ նշանավոր բնական կամ հանրային իրադարձությունների պատվին կանգնեցված խաչքարեր և ժողովրդի կողմից կոչվում են Ցասման խաչ: ԻԸ գլխում նկարագրում է Տարոնի Ողկան (Ողոկան) բերդը, այնուհետև հպանցիկ նշում է Մուշեղի անունով բազմաթիվ բերդերի, Ոսպան բլուրի մասին (ԻԹ), Մանաճիհրի բերդի, Ազնավորաց բերդի մասին («Համով-հոտով», էջ 380, 392): «Մանանայ» ժողովածուում խոսում է տարբեր վանքերի ու մատուռների (Վարազա վանք, Կարմրավորա վանք, Նարեկա վանք, Սուրբ Կարապետ, Սուրբ Եզդիբուզդի, Հոգվոց վանք ևն) մասին (Երկեր, հ. 1, էջ 134, 141, 144, 373, 390): Որոշ դեպքերում Սրվանձտյանցը հատուկ հողվածներ է նվիրել առանձին հուշարձաններին ու նրանց նկարագրությանը՝ ինչպես, օրինակ, Հոգվոց վանքին (Երկեր, հ. 2, էջ 12-18) կամ Մարզվանի Չարխափան Ս. Աստվածածին վանքին (Երկեր, հ. 2, էջ 200-207), Ս. Նշանի վանքին (Երկեր, հ. 2, էջ 261-264) ևն:

Ժամանակակիցները շատ բարձր են գնահատել Գարեգին Սրվանձտյանցի ավանդը ազգագրության և հնագիտության բնագավառում, և պատահական չէ, որ նա ընտրվել է Պետերբուրգի կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ («Էջեր Հայ Գրականութենէն», հ. Ա, Ա-Գարեգին Եպս. Սրուանձտեանց, Կահիրե, 1942, էջ 11):

Հասմիկ Գալստյան (ՀԱԻ)

ՄՐՎԱՆՁՏՅԱՆՅԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԵՒ ՈԳԻՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՌՈՂ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆ

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցն իր բանագիտական և ազգագրական բնույթի գրառուժներում որոշակի տեղ է հատկացրել նաև հայ ժողովրդական

անահավատություններին ու նախապաշարումներին: «Գրոց ու բրոց...», «Մանանայ», «Թորոս Աղբար» գրքերում բազմիցս անդրադառնում է առասպելական ոգիների մասին պատմող ժողովրդական գրույցներին, հավատալիքային դրսևորումներին, ծեսերին ու սովորույթներին:

Բանահավաքներից նա առաջինն էր, ում ուշադրությունից չվրիպեցին ժողովրդի մեջ գոյություն ունեցող և նրա կենցաղի ու առօրյայի մաս կազմող հավատալիքները, նախապաշարմունքները: Սրուանձտյանցը նկատեց, որ «Ժողովրդի մեջ կան տարածուած բազմաթիւ սնտիապաշտական գրոյցներ ու սովորոյթներ, որոնք կարօտ են գրառման և ուսումնասիրման»:

Ելնելով իր գրառած նյութերից՝ Սրվանձտյանցը տալիս է առասպելական ոգիների բնութագիրը, փորձում բացատրել ժողովրդի մեջ առկա հավատալիքների ակունքները, պատճառներն ու հանգամանքները: Զրույցների միջոցով ներկայացնում է սատանաների ու գրողների, ջադու և սև պառաժների, դժոխքի ու դրախտի բնակիչների մասին հավատալիքները: Նրա գրառումների մեջ սփռված են նախապաշարումների, չար աչքի, հիվանդությունների և դրանց բուժումների ժողովրդական տարբերակների մասին բազմաթիվ հիշատակումներ:

«Թորոս Աղբար» գրքի երկու հատորներում զետեղված են ուղեգրական, տեղագրական բնույթի արժեքավոր նյութեր, որոնք հայ ժողովրդական հավատալիքների, ստորին առասպելաբանության (դիվաբանության) կերպարների, վերջիններիս առնչվող ծեսերի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում:

Քաջատեղյակ լինելով հայ պատմագիրների գործերին՝ Սրվանձտյանցն իր գրառած գրույցներին զուգադրում է պատմիչների վկայությունները: Օրինակ՝ դևերի մասին խոսելիս՝ հիշում է Պապ թագավորին, գոռնադաբների մասին գրելիս՝ Ղարաչորակի պատմությունը Առաքել Դավրիժեցու պատմությունից, ևն:

Կարևորելով կրթության դերը՝ Սրվանձտյանցը դրա պակասին կամ իսպառ բացակայությանն է վերագրում առասպելական ոգիների մասին ժողովրդական գրույցների բազմազանությունը, արմատացած նախապաշարմունքների ու հավատալիքների կենցաղավարումը:

Տորք Դալայան, բ.գ.թ. (ՀԱԻ)

ԹՈՆԻՐԻ ԱՌԱՍՊԵԼՈՒՅԹԸ Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Թոնիր հասկացությունն ազգագրության մեջ սերտորեն կապված է լավաշի թխման ավանդույթի հետ, որը հնագույն ժամանակներից տարածված է եղել Առաջավոր Ասիայում: Թոնիր բառի ամենաառաջնային իմաստն է՝ հողի մեջ թաղված կավե վառարան, որն ունի գլանի ձև և դեպի ներքև գնալով լայնանում է, օգտագործվում է հաց թխելու, ինչպես և կերակուր եփելու համար: Սակայն թոնիր եզրույթն ունի նաև երկրորդական ու երրորդական իմաստներ, որոնք առաջին հայացքից կարող են դիտարկվել որպես փոխաբերական գործածության պարզ լեզվական տարբերակներ, բայց դիցաբանական տվյալների լույսի տակ քննարկվելիս՝ առավել խորքային իմաստաբանական նշանակություն են դրսևորում: Բարբառներում թոնիր (թնտիր) ասել են նաև գետերի մեջ փոս ընկած՝ խորունկ տեղին: Նույն ձևով է կոչվել դեպի ներքև

քաշող ջրի ոլորապտույտ ընթացքը այդ փոս ընկած հատվածներում: Բացի այդ, թոնիր է անվանվել այսպես կոչված քուրսին, այսինքն՝ կավե հատուկ ամանը՝ փոքր չափերի, որի մեջ ձևեռները ածուխ են վառել և մի սեղանի տակ դնելով՝ ամբողջովին ծածկել են վերմակով, այնուհետև մտել են այդ վերմակի տակ և տաքացել: Եւ վերջապես, թոնիր եզրույթը գործածվել է չորեքթաթ անող երեխաների համար պատրաստվող հատուկ մի հարմարանքի համար, որն օգնել է երեխային կանգնած մնալ. քառակուսի տախտակի չորս անկյունների ձողերի վրա հաստատվել է մեկ այլ տախտակ՝ մեջը կլոր անցք բաց արած, որի միջով կանգնեցրել են երեխային՝ ձեռքերը անցքից՝ «թոնիրից» վեր թողնելով:

Թոնիր բառը հանդիպում է գրեթե բոլոր հինարևելյան՝ մեռած ու կենդանի լեզուներում, և պատկանում է հայերենի այն վաղնջական մշակութային բառաշերտին, որը հաճախ ընդհանուր է եղել տարածաշրջանի հնագույն լեզուների համար: Մասնավորաբար, հայերենում այս բառը փոխառված չէ մեզ հայտնի որևէ լեզվից: Գ. Ջահուկյանը թոնիր բառը դնում է ազարակ, անագ, կաշի, ոսկի և նմանատիպ այլ բառերի հետ մեկ շարքում, որոնք խմբավորում է հետևյալ բնորոշմամբ՝ «Առաջավոր Ասիայի ժողովուրդների մեջ տարածված մշակութային բառեր, որոնց սկզբնաղբյուրը կա՛մ շումերերենն է՝ այլ լեզուների մեջ տարածված՝ աքքադերենի միջոցով ու նրա միջնորդությամբ, կա՛մ աքքադերենը, կա՛մ այլ, երբեմն՝ անհայտ լեզու» (Հայոց լեզվի պատմություն, էջ 452): Քանի որ Հ. Աճառյանի օրոք շումերական բառը դեռևս հայտնի չէր, նա իր Արմատական բառարանում բերում է միայն սեմական զուգահեռները՝ կարծելով, թե բառն ունի սեմական ծագում: Հետագա լեզվաբանական ուսումնասիրությունները, սակայն, պարզեցին, որ սեմական բոլոր ձևերը ոչ թե ծագում են սեմական նախալեզվից, այլ ուղղակիորեն փոխառվել են աքքադերենից (տե՛ս Հայոց լեզվի պատմություն, էջ 463): Ընդ որում, սեմական լեզուներից փոխառյալ են համարվում իրանական բազմաթիվ ձևերը, մինչդեռ հայերենն իր հնչյունաբանական ձայնավորմամբ առանձնակի տեղ է գրավում, և այս հարցում համակարծիք են Հ. Աճառյանն ու Գ. Ջահուկյանը: Թեև Հ.Հյուբշմանը հայերեն թոնիր բառը համարում էր փոխառյալ իրանական որևէ լեզվից (Hübschmann H., Armenische Grammatik, Leipzig: Breikopf & Härtel, 1897, S. 155, § 251), սակայն ո՛չ հնչյունաբանական, ո՛չ էլ իմաստաբանական հիմնավորումներ չէր բերում: Հետևաբար իրավացի էր Հ. Աճառյանը, երբ գրում էր, որ «Յայտնի չէ թե հայերենը ո՛ր լեզուից է փոխառեալ. որովհետև վերի ձևերից ո՛չ մեկին համապատասխան չէ՛ ճշտի» (ՀԱԲ, հ. 2, էջ 296): Ի դեպ, թյուրքական լեզուներում բառը փոխառվելով՝ օսմաներենի միջոցով հասել է մինչև ֆրանսերեն՝ athanor ձևով, որը նշանակում է «քիմիական հնոց»:

Հայոց դիցաբանության մեջ թոնիրը համարվել է հրաբխի խառնարանի ծիսական մանրակերտ, առասպելական մտածողությամբ և գործառության իմաստաբանությամբ այն նույնացվել է դարբնի հնոցին: Տիեզերածնական հինավուրց առասպելներում հրաբխային լեռների մասին պատկերացումները կարևոր դեր են խաղացել, մանավանդ Հայկական լեռնաշխարհի նման՝ հրաբխային-սեյսմիկ ակտիվ տարածաշրջաններում: Որոշ լեռներ արդեն իսկ իրենց անվան մեջ պարունակել են թոնիր-խառնարան զուգադրումը, ինչպես, օրինակ՝ Թոնդրակ լեռնագագաթի անվանումը, որը կազմված է թոնդիր բարբառային ձևին -ակ վերջածանցի կցմամբ (թոնդիր+ակ=Թոնդրակ): Գրիգոր Մագիստրոսը (11-րդ դ.) իր «Թղթեր»-ում հենց այդպես էլ բացատրում է Թոնդրակ տեղանունը. «զանուն տեղւոյն Թոնդրակս անուանեն, զի անունդ այրեցման նշանակե

պատշաճ գոլ»: Նախնական հավատալիքների համաձայն՝ երկնային ամպրոպի աստվածը կամ նրա կինը հաց են թխում կրակից ու բոցից շիկացած լեռնային խառնարանում. սակայն աստվածային օրենքի խախտման, որևէ օրինազանցության, թշնամանքի/պատերազմի կամ կնոջ դավաճանության հետևանքով երկնային աստվածը պատժում է նրան՝ վերածելով ձկան: Թոնիրը լցվում է ջրով, կաթնահունց խմորոտ պատերը քաղցր համ են տալիս այդ ջրին, որն էլ դառնում է մեղրահամ գետի ակունք՝ բխող լեռան ստորոտից: Այս նախառասպելը բացատրել է ոչ միայն խառնարանային լճերի գոյացումը, այլև արտահայտել է գործող հրաբուխների մարման, ռելիեֆի ձևափոխման բազմահազարամյա գործընթացը, ինչպես նաև մեկնաբանել է լեռնային գետերի առաջացումը: Առասպելական այս մտածողության հետևանքով է նաև, որ ջրհորն ու թոնիրը դիցաբանական մակարդակում նույնացվել են:

Չհաշված Գրիգոր Մագիստրոսի հպանցիկ անդրադարձը, առաջին անգամ հայ բանագիտության մեջ հրաբուխ-թոնիր-ջրհոր դիցաբանական կապն ուղղակիորեն տեսնում ենք Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միւրի Դուռ» (1874 թ.) ժողովածուում: Սրվանձտյանցի գրառումներում թոնիր/ջրհորի առասպելային արտահայտվում է երկու տեղ՝ Նեմրուծի խառնարանի և Լեզքի սուրբ թոնիրի մասին ստուգաբանական ավանդազրույցներում: Առաջին դեպքում՝ Նեմրուծ լեռան մասին խոսելիս, նախ Սրվանձտյանցը նկարագրում է, ըստ էության, Վահագնի և Աստղիկի դիցաբանական կապին առնչվող ողջ առասպելաստեղծ տեղանքը. «Մշոյ դաշտի արեւելեան հիւսիսը կայ մէկ լեռ Նեմրուծ անուն, որոյ մէկ երեսը կը նայի Պուլանրիսայ եւ Մանգկերտու կողմը, մէկ երեսը Խլաթն է առ ափն Վանայ ծովուն, եւ միւս երեսը Մշոյ դաշտն է: Իւր թեւի տակն ունի նաեւ մէկ փոքրիկ եւ իրմէն բաժան լեռ մը տանձաձեւ, սեւ եւ լերկ: Այս փոքր լեռն է Գրգուռ, որոյ ներքեւն է Ջրհոր գեղը: Ջրհորի ձախ կողմն է Շամիրամ գեղը, եւ առջեւը Դատվան գեղը՝ Վանայ ծովուն նաւահանգիստը» («Գրոց ու բրոց...», 1874, գլուխ ԺԱ):

Այնուհետև Սրվանձտյանցի գրառման մեջ թոնիրի առասպելային ի հայտ է գալիս հայոց ազգաձնական առասպելի կոնտեքստում, որը տվյալ դեպքում փոխարինում է տիեզերաձնական առասպելին. «Դատվան գեղէն Ջրհորի սահմաններով դէպ ի Նեմրուծ՝ ի դաշտակողմն գնալով՝ կը տեսնես կարգ մը տնկուածի կամ կանգնուածի պէս սեւ քարեր, որոնք հեռուէն եւ մութ ժամանակ կրնան խաբել զմարդ՝ թէ կարաւան են անոնք կամ մարդ եւ ուղտ: Տեղացիք Բէլի ուղտեր եւ ուղտապաններ կ'անուանեն զանոնք եւ որոց համար կը վիպասանեն ու կ'ըսեն, թէ. «Կռապաշտ թագաւոր է եղեր Բէլը եւ մեծ զօրքով եկեր հայոց թագաւորի ու երկրի վրայ կռիւ: Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռնով սպաներ է զԲէլ եւ հաներ Նեմրուծայ գլուխ, այն տեղը փորեր, թոնիր շիներ, մէջը կախեր վառեր է: Աստուծոյ հրամանքով այն կրակը ջուր է կտրեր, զմոխիրն հողի տակ իջուցեր, որ չեղնի քամին անոր փոշին տանի: Բէլի մարդիկ եւ ուղտերն ալ իրենց վախէն քար են կտրեր: Մինչեւ այսօր թոնիրն ու ջուրը կայ, եւ այն ջուրն է, որ սարի տակով կ'իջնայ, Մեղրագետի ակնէն կը բղիւէ եւ այդ գետը կը կազմէ»: Պատահական չէ, որ թոնիր/ջրհորի առասպելայինը հիմք է դարձել նաև սրբավայրի կառուցման համար՝ այն գետի ակունքի մոտ, որը խորհրդանշում է հինավուրց առասպելում մեղրահամ ջրով լցված թոնիրը. «Մեղրագետի ակն կլորակ աւազան մի է Մշոյ դաշտին մէջ՝ Օձ քաղաքին մօտերը: Աւազանի շուրջը սալարսած են քարերով, եւ անոր մօտ գմբէթ մը կայ: Ջուրը այդ կլոր աւազանի ընդարձակ գոգէն կը բղիւի՝ աւազներ հանելով իւր հետ, եւ պղպջալով կ'ելնէ ոչ

մէկ տեղէ, այլ բազմաչէայ: Այս ակի բուն բղխման վրայ ընտիր վէպեր ունին տեղացիք...» («Գրոց ու բրոց...», 1874, գլուխ ԺԱ):

Երկրորդ անգամ թոնիրի առասպելույթն ի հայտ է գալիս Սրվանձտյանցի գրառած՝ Վան քաղաքի մոտ գտնվող Լեզք գյուղին առնչվող ավանդազրույցում: Այս գյուղի անունն անմիջականորեն կապված է Արա Գեղեցիկին հարություն տված առասպելական արալեզների անվանը, քանի որ առասպելի տեղայնացումներից մեկի համաձայն՝ Արայի վերակենդանացումը հենց Լեզք գյուղում էր եղել: Ըստ Սրվանձտյանցի՝ «Այս Լեզք գիւղի մօտերը կայ մի թոնիրի ձեւով աղբիւրի փոսակ կամ ջրհոր, որ Սուրբ թոնիր կը կոչեն, ուր յաճախ գնացողներ կան. շատերուն իբրեւ ուխտատեղի, ոմանց ալ հետաքրքրելի: Միմիայն մէկ ձուկ կ'երեւի այդ ջուրին մէջ, եւ որին որ երեւի, անոր բաղոն ու ուխտը կը կատարուի: Դա կնկան կերպարանք ունի եղեր. եւ արծաթէ օղն ալ իւր քթին անցուցած՝ կը տեսնուի տակաւին: «Երեցկին է եղեր դա, կին կարի գեղեցիկ: Երբ նստած թոնիրի շուրթն հաց կը թխէ, աղքատ մը կուգայ հաց կ'ուզէ, կուտայ: Կերակուր կ'ուզէ, կուտայ: Գինի կ'ուզէ, կուտայ: Թշուառականը կը համարձակի նաեւ պագ մը ուզելու: Երեցկինը կը վարանի, բայց կը մտածէ, թէ աղքատ թեմարգու է, ի՞նչ կայ, մե՛ղք է, գուցէ վարձք է: Պագն ալ կուտայ: Եւ յանկարծ նոյն վայրկենին երեցը ներս կը մտնէ: Երեցկինը ամօթէն ու ահէն ինքզինքն կը ձգէ ի թոնիր՝ կրակին մէջ: Տէրտերն ալ զինքն ի վրէն: Բայց տէրտերը կը մրկի, իսկ երեցկինը, կրակն ջուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծոյ հրամանքով յաւիտենական յիշատակ կը փսայ նոյն տեղ» («Գրոց ու բրոց...», 1874, գլուխ ԺԲ):

Ուշագրավ է, որ գրեթէ նույն ավանդազրույցը այլ բանահավաքների գրառումներում պատմվել է Մեղրագետի ակունքի մասին, որի առաջացումն, ինչպես տեսանք, Սրվանձտյանցի տարբերակում աղերսվում է Հայկի ու Բելի առասպելին: Սակայն Վ.Պետոյանի արձանագրած տարբերակում, Լեզքի ավանդազրույցի նման, Մեղրագետի պարագայում կրկին հանդես են գալիս երեցկինն ու երեցը, միայն թե վերջինս այստեղ չի նետվում թոնիրի մէջ, այլ երեցկնոջն է ստիպում նետվել («Սասնա ազգագրությունը», 1965, էջ 364-365): Ի դեպ, Լեզքի թոնիրի մասին ավանդազրույցի մէկ այլ տարբերակ գրի է առել նաև Երվանդ Լալայանը Վասպուրականում, իսկ Շիրակում արձանագրված տարբերակը 1897-ին չափածո մշակել է Ավետիք Իսահակյանը: Այսպիսով, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի գրառումներով երևան է գալիս հայոց հեթանոսական հնագույն մի առասպելույթ, որը դրսևորվում է բազմաթիվ ավանդազրույցներում, և որը ժամանակին էական առանցքային դեր է խաղացել Հայկական լեռնաշխարհի ծիսահավատալիքային համակարգում:

Պետրոս Դեմիրճյան, բ.գ.դ. (ԳԻ)

ԱՐԱԲԿԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ

Գարեգին Սրվանձտյանցը հայ ժողովրդի ամենամեծ երախտավորներից մեկն է՝ թե՛ որպես հոգևոր, ազգային-հասարակական նվիրյալ գործիչ, թե՛ որպես անգուգական բանասեր, բանահավաք ու ազգագրագետ: Հատկանշական է, որ նրա գործունեությունը տասնամյակներ շարունակ շաղկապված է եղել երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյանի՝

Խրիմյան Հայրիկի կյանքին ու գործունեությանը. բավական է հիշել, որ Գ.Սրվանձտյանը եղել է Խրիմյանի հիմնած «Արծուի Վասպուրական» թերթի խմբագրի տեղակալը, որտեղ և տպագրվել են ազգային-ազատագրական պայքարի գաղափարով ներշնչված՝ նրա առաջին ծանրակշիռ հոդվածները: Տարիներ անց՝ 1862 թ., ստանձնելով Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը, Խրիմյան Հայրիկը Սրվանձտյանցին է վստահել նաև Մշո Ս. Կարապետ վանքին կից իր հիմնած Ժառանգավորաց վարժարանի տնօրեն-ուսուցչի և «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթի խմբագրի պատասխանատու պաշտոնները: Գ. Սրվանձտյանը Խրիմյանի հետ է սկսել նաև իր հոգևոր ու ազգագրական գործունեության առաջին քայլերը՝ 1860-1861 թթ., որպես նվիրակ և քարոզիչ, շրջագայելով հայկական զանազան գավառներում և կատարելով իր գրառումներն ու ուսումնասիրությունները: Այդ ամենը, բնականաբար, կյանքի մեծ դպրոց է եղել երիտասարդ գործչի համար, պայմանավորել նրա հետագա բազմադյուն ազգային-հասարակական ու ստեղծագործական գործունեության ընթացքը:

Բացի գեղարվեստական՝ մասնավորապես թատերական հայտնի գործերից, Գարեգին Սրվանձտյանի ստեղծագործական վաստակի կարևորագույն մասն են կազմում ժողովրդական բառ ու բանի, զրույցների ու ավանդությունների, ազգագրական հարուստ նյութերի ջանադիր հավաքչական արդյունքը հանդիսացող «Գրոց ու բրոց...» (1874), «Հնոց և նորոց» (1874), «Մանանայ» (1876), «Թորոս Աղբար» (1-2 մասեր, 1879 և 1884), «Համով հոտով» (1884) ժողովածուները: Սրվանձտյանի անվան հետ է կապված, մասնավորապես, «Մասնա ծոեր» ազգային էպոսի՝ «Մասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» առաջին պատումի հայտնաբերումը, գրառումն ու հրատարակումը: Վիթխարի ծավալի այս աշխատանքները բարձր մակարդակով իրականացնելու համար Սրվանձտյանը բանասիրության մեջ համարվել է հայ բանահավաքների ու ազգագիրների ռահվիրան, գնահատվել նաև միջազգային ասպարեզում՝ ընտրվելով Պետերբուրգի Կայսերական հնագիտական ակադեմիայի պատվավոր անդամ:

Օսմանյան կայսրության լծի տակ հաճող հայության հետագա ճակատագրի հարցը առանձնակի հրատապություն էր ստացել հատկապես 19-րդ դարի վերջին քառորդին՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Օրակարգային էր հայկական գավառների բուն վիճակի, ժողովրդի կյանքի պայմանների, ազգային զգացմունքների ու գաղափարների վերագարթոնքի խնդիրը: Ահա թե ինչու՝ 1878 թ. գարնանը Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը որոշում է, հատուկ կոնդակով սահմանված առաքելությամբ, երեք վարդապետ ուղարկել Փոքր և Մեծ Հայաստան: Երեքից մեկը Գարեգին Սրվանձտյանն էր: «Այն օրերը Հայկական խնդիրն թեև առած սաւառներ ու հասեր էր Եւրոպիոյ մեծ տերութեանց դահլիճները, եւ քաղցր յոյսեր կախեր սփոեր էր Հայաստանի աւերակներուն եւ Հայոց աւեր սրտերուն,- «Թորոս Աղբար»-ում գրում է Գ.Սրվանձտյանը:- Հայրենի հողն ու հողոյն հաւասարած Հայն կենաց նոր շարժում մը կ'ստանայր: Ս. Պատուիրակներն իրենց բարձր տեղերէն կ'երեւէին մինչեւ Հայաստանի խորն ու ձորը 'ի խաւարի նստող բնակչաց: Իսկ լրագրութիւն, իբրեւ գետ, կը հոսեր կը տարածէր յաջող ակնկալիքներ»: Առաջին ուղևորությունը տեղի է ունենում 1878 թ. ապրիլի 30-ին: Մայիսի 1-ին պատվիրակներն արդեն շոգենավում էին, որը, ինչպես պատկերավոր նկարագրում է հեղինակը, «զմեզ բարձած իւր թելոց վրայ, կը թռեր դէպ 'ի Մեւ ծով»: Ոգևորությունն անչափելի էր. «Գարունն իւր չքնաղ գեղեցկութեամբ շքեղագարդած էր Վոսփորի երեսներն ու շրթունք, արեւն պայծառ եւ փափուկ, բայց

ասոնք չէին ազդեր յիս: Օտար էին անոնք. ես կ'երթայի հայրենեաց արեւն ու գարունը ողջունել»:

Ուղևորության կարևոր հանգրվաններից մեկը հինավուրց Արաբկիր քաղաքն էր: Փոքր Հայաստանի մի շարք կողմերը շրջագայելուց հետո՝ վիճակագիր Գ. Սրվանձոյանցն այստեղ է հասնում հուլիսի 15-ին: Արաբկիրի ժողովուրդը, աշխարհիկ ու կրոնական ղեկավարությունը նրան խանդավառ ընդունելություն են ցուցաբերում: «Երբ լսեց ամեն մարդ Սրուանձտեանցի ժամանելը, հետզհետե կուգային /.../ Նորին սրբութեան գալուստը շնորհաւորելու, իսկ նա այցելուաց միշտ բարեմաղթութեամբ շնորհակալիք յայտնելէ չէր դադարէր,- վկայում է Պոլսի «Հայրենիք» օրաթերթի թղթակիցը (1878 թ., թիւ 461),- որով տեղույս ազգային սահմանադրական ժողովներէն, խորհուրդներէն, ինչպէս եւ ամեն կարգի անհատներէ սէր եւ համակրանք կը վայելէր, եւ զինքը տեսնողները բազմիցս տեսնել կ'ուզէին»: Հետագա տասն օրերի ընթացքում Սրվանձոյանցն այցելում է քաղաքի ազգային վարժարաններն ու կարևոր հաստատությունները, քարոզներ՝ կարդում՝ ճարտարապետությամբ հռչակված Մայր եկեղեցում... Իսկ մեկնելու օրը՝ հուլիսի 24-ին, ինչպէս դարձյալ վկայում է թղթակիցը, «առաջնորդարանի դռնէն մինչ հեռաւոր փողոցներ եկեղեցական դասն ու երգեցիկ ուսանողներ շարուած ողջ երթի երգերը կը հնչեցնէին, ազգային ժողովները ու խորհուրդները խումբ խումբ առաջնորդարանէն համայն երեւելեաց հետ կ'ուղեկցէին Նորին սրբութեան: Անհամար ժողովուրդ փողոցները խոնեալ ի վերջին տես կու գային կենաց քարոզ այցելուին»: Խանդավառությունն անսահման էր, քանզի «այն վերջին պահուն յորում Ս. Հայրն իր վերջին փառք բարեաւի օրհնութիւնը կը նուիրէր Հայկական ամբոխին, կեցցէներ օդը կը թնդացնէին...»:

Տասնամյակներ անց ԱՄՆ-ում հրատարակված «Պատմութիւն Հայոց Արաբկիրի» մեծածավալ հատորի (Նիւ Եորք, 1969) հեղինակները հետևյալ տողերով են գնահատել մեծ ազգասեր-ազգագրագետի պատմական այդ առաքելությունը. «Խրիմեան հայրիկի շնորհալի աշակերտը, Գարեգին Վրդ. Սրուանձտեանց, հայ փոլքլորային գրականութեան բազմաշխատ դէմքերէն մին է, թերեւս խոշորագոյնը, որուն „Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ», խիստ շահեկան գիրքէն առնելով՝ կուտանք Արաբկիրի վերաբերեալ ընդարձակ նկարագրականը: Ինչպէս ծանօթ է, Գարեգին Վրդ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին կողմէ քննական ուղևորութիւն մը կատարեց հայկական գաւառներու մէջ եւ բաբախուն տողերով ու գունագեղ ոճով տուաւ հայ ժողովուրդի զանգուածին կեանքը, իր զանազան երեսներով: Համիտեան ջարդերու նախօրեակին հայկական բնագաւառներու առօրեան ճանչնալու համար, անհրաժեշտ է կարդալ այս հայրենաշունչ մատեանը՝ որ տեղագրական, ազգագրական, տնտեսական եւ կրթական տեղեկութիւններ պարունակող արժէքաւոր գործ մըն է» (էջ 66):

Զարմանալին այն է, որ նման վիթխարի գործերի հեղինակն ինքը չափազանց համեստորեն էր գնահատում իր կատարածը. «Սոյն հրատարակութիւնս պաշտօնական չէ,- գրում է նա,- այլ սոսկ իբրեւ ուղևորութիւն եւ զանազան ծանօթութիւնք իմ շրջած տեղեաց եւ բնակչաց կեանքի վրայ...»: Սակայն այն տողերը, որ նա թողել է իբրև իր կատարած առաքելության գլխավոր արդյունք ու եզրակացություն, ինքնին չափազանց խոսուն են. «Հայ եղողը Հայաստանի հողոյն վրայ ինքզինքը կը ճանաչէ, ինքզինքը վեհ եւ կենդանի կը գտնէ, փորձեցէք եւ տեսէք»:

«ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆԸ

«Մասնա ծռեր» էպոսի պատմությունը շատ հարցեր է առաջադրում էպոսագիտությանը. մասնավորապես՝ էպոսի և գրավոր գրականության հարաբերության հարցը: Անկախ այն բանից, թե ինչպես ենք լուծում էպոսի ձևավորման ժամանակի հարցը, ակնհայտ է, որ «Մասնա ծռեր»-ը երկար դարեր գոյատևել է հայոց գրավոր մշակույթին զուգահեռ՝ առանց որևէ կերպ հանդիպելու գրին: Մի կողմ թողնելով էպոսի պատմության հետ կապված շատ խնդիրներ, հիշենք միայն, որ 16-րդ դ. պորտուգալացի ճանապարհորդ Տենրեյրոն իր գրառումներում հաղորդում է, որ Հագո քաղաքում (Մասուն) ինքը պատմություն է լսել հսկա Դավթի և նրա կնոջ մասին: Այսինքն՝ առնվազն այդ դարում էպոսն արդեն պատմվելիս է եղել Մասունում: Այդ շրջանում հայերը շատ հարուստ գրականություն ունեին, որում, սակայն ոչ մի հիշատակություն չկա էպոսի մասին: Ինչ որ ուեցել ենք՝ անուղղակի հիշատակություններ են էպոսի հերոսների մասին: Նկատի ունեն թովմա Արծրունու «Պատմություն»-ը և Անանուն գրուցագրի գրառումները:

Բայց միանգամայն բնական հարց է առաջանում՝ ինչու՞ հայոց հարստագույն միջնադարյան մատենագրությունը ոչ մի կերպ չի անդրադարձել էպոսին: Այս հարցը անտեղի չի թվում, երբ հիշում ենք այլ էպոսների գրական ճակատագրերը՝ սկսած «Գիլգամեշ»-ից ու անտիկ էպոսից մինչև ավելի մոտ ժամանակների էպոսները: Մեզ հայտնի չեն «Գիլգամեշ»-ի կամ «Իլիական»-ի ու «Ոդիսական»-ի բանավոր տեքստերը, դրանք մեզ հասել են իբրև արդեն գրական ստեղծագործություններ: Միջնադարյան շատ էպոսներ դարձյալ մեզ են հասել ոչ միայն գրի առնված, այլև գրական մշակման ենթարկված: Իսկ ահա հայկական էպոսը առնվազն մի քանի հարյուր տարի ապրել է հայ գրականության կողքին՝ առանց նրանից նկատվելու: Չմոռանանք, որ դեռ 19-րդ դ. հայ գրողների հայացքը ավելի շատ ուղղված էր Մովսես Խորենացու գրի առած էպիկական սյուժեներին, քան թե կենդանի էպոսին: Ինչու՞ : Հարց, որին պատասխանելը այնքան էլ հեշտ չէ, ինչքան կարող է թվալ առաջին հայացքից: Էպոսի հազարամյա հոբելյանի տոնակատարության ժամանակ տեսակետ է արտահայտվել, թե գրավոր գրականությունը ազնվական էր իր էությանը և, ուրեմն, չպետք է ուշադրություն դարձնել ժողովրդական էպոսին (մշակույթի դասակարգայնության թեզի դրսևորումներից մեկը): Բայց մենք հասկանում ենք, որ սա չափազանց պարզունակ բացատրություն է:

Հիմա գանք ավելի նոր ժամանակների իրողություններին՝ Գարեգին Սրվանձտյանցի գրառմանը: Հայտնի ևս մի փաստ պետք է հիշեցնեն: Ինքը՝ Սրվանձտյանը, հայտնում է, որ մեծ դժվարությամբ է կարողացել գրի առնել առաջին տարբերակը: Երեք տարի փնտրել է, մինչև գտել է Կրպոյին: Երկար համոզել է Կրպոյին, հյուրասիրել, կազդուրել նրան, մինչև Կրպոն համաձայնել է պատմել իր իմացածը: Եթե փոքր-ինչ պատկերավոր ասենք՝ վեպը բավական խորն է թաքնված եղել գրչի մարդկանցից, թեև հասարակ մարդիկ Մասունում, Մուշում և այլուր իրենց միջավայրում պատմել են էպոսը: Թերևս, հենց այս իրողության մեջ պետք է փնտրել բացատրությունն այն բանի, թե ինչու էպոսը չի գրառվել հայ հեղինակներից: Էպոսը խուսափել է գրչից ու գրականությունից: Էպոսի ձևավորման շրջանում հայ վիպական գրավոր ավանդույթն արդեն իսկ դարերի

պատմություն ուներ, և գեղջկական էպոսը չէր տեղավորվում այդ շրջանակներում: Մյուս կողմից, էպոսն ինքը այսպես պահպանում էր իր անկախությունն ու ինքնությունությունը: Ժողովուրդը գրքի պաշտամունք ուներ, բայց իրեն հարազատ էր իր իսկ ստեղծած էպոսը: Այսպես ապրում էին կողք-կողքի, բայց առանց հանդիպելու, հայոց միջնադարյան խոսքարվեստի երկու հատվածները: Սրվանձոյանցը «թաքստոցից» դուրս հանեց և ողջ հայ ժողովրդի սեփականությունը դարձրեց աշխարհի ամենահետաքրքիր էպոսներից մեկը:

Ավարտին մեջբերեմ մի քանի նախադասություն Սրվանձոյանցի նախաբանից. «Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կ'ունենայ. բայց կարծեմ արհամարհողները աւելի պիտի լինին և այպանողներ, ոչ միայն այս գրվածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընդ որ և իմ անձը: Ասոնք չհասկցողներն են: Բայց մեր փոյթը չէ: Քաջալերուած կ'համարիմ զիս, եթէ համբանքով քսան հոգի ևէթ լինին հաւանող այս գործոյն, և կ'շարունակեմ, խրախոյս տալով այլոց որ՝ հետևին, աշխատասիրեն ձեռք բերել, և ի լոյս ածել այսպիսի գրուածքները» (Երկեր, հ.1., էջ 86): Այսինքն՝ դեռ 19-րդ դարում կային մարդիկ, որոնք կարող էին չհասկանալ հայկական բանավոր դյուցազնավեպի արժեքը, և արժանապատիվ սրբազան հորից քաջություն էր պահանջվում՝ այն ասպարեզ բերելու համար: Այս բոլորից հետո մենք բոլոր հիմքերն ունենք ասելու, որ Գարեգին Սրվանձոյանցն իրապես հայկական էպոսի պարզապես գրառող չէր՝ թեկուզ առաջին, այլ նրա հայտնագործողը:

Էսթեր Խեմչյան, ք.գ.թ. (ՀԱԻ)

ԿԱՅՈՒՆ ԲԱՆԱԶԵԻԵՐԸ Գ.ՍՐՎԱՆԶՏՅԱՆՑԻ ԳՐԱՌԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Ժողովրդական հեքիաթների հավաքման և հրատարակման առաջամարտիկ Գարեգին Սրվանձոյանցը հատուկ վերաբերմունք է ունեցել բանավոր խոսքով փոխանցվող հնօրյա պատմությունների, Հայաստանի նահապետերի, դյուցազունների, թագավորների գործերը ներկայացնող ավանդազրույցների ու առասպելների մասին: Արժևորելով ժողովրդական բանավոր խոսքի անգնահատելիության փաստը՝ նա հայոց բանավոր վեպերի ընդերքում, թեև փոփոխված և անհասկանալի, տեսնում էր պահպանված ավանդույթը: Իր պրպտումների ընթացքում Գ. Սրվանձոյանցը նկատել էր «...որ Հայաստանի իւրաքանչիւր գաւառը զատ զատ ոճ մը ունի խօսից, եղանակ մը ունի արտասանութեան բառից...» (Երկեր, հ. 1, էջ 176): Ուշադրություն հրավիրելով այս հանգամանքին՝ նա քաջ գիտակցում էր, որ հայոց լեզվի բառամթերքի ուսումնասիրության համար «վեպերն ու զրույցները» հորինող վիպասացը պահպանում է իր գավառի տեղական սովորույթներն ու նկարագիրը, որոնց բացահայտման համար տարբեր մոտեցումներ պետք է կիրառել: «Մանանայ» (1876) և «Համով-հոտով» (1884) ժողովածուների մեջ հրատարակված հեքիաթներում բարբառային տեսակետից էական տարբերություններ կան: Եթե առաջին ժողովածուում Սրվանձոյանցը հարազատ է մնացել բանասացական պատումի բարբառին և վերարտադրման նրբերանգներին, ապա

երկրորդ ժողովածուում հեքիաթների տեքստում ակնհայտ միջամտություններ կան, որոնք պայմանավորված են արևմտահայ բարբառների բազմազանությունը հանրության բոլոր շերտերին հասկանալի դարձնելու ցանկությամբ:

Հեքիաթի սյուժեի կառուցվածքին բնորոշ են ինքնատիպ բառային միավորներ, անփոփոխ կրկնություններ, բարբառային կաղապարներ, դարձվածներ, ասույթաբանական ժանրեր (առած-ասացվածք, անեծք, օրհնանք, երդում են), որոնք ապահովում են հեքիաթի մուտքն ու ավարտը, ձևավորում են գործողությունների միջավայրը, հերոսի գլխավոր խնդիրը և դրա ընթացքը՝ ըստ հեքիաթի պահանջների: Հեքիաթի կառույցի անփոփոխ բաղադրիչները կոչվում են հեքիաթային ավանդական կայուն բանաձևեր: Հեքիաթների տարածաշրջանային տարբերակայնությամբ պայմանավորված՝ դրանց արտահայտման ձևերն ի կատար են ածվում բարբառային ինքնատիպ արտահայտչամիջոցներով: Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթներում պահպանված են արևմտահայ բարբառներին հատուկ սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ հյուբեղ ու արտահայտիչ կայուն բանաձևեր, օրինակ՝ «Կ'եղնա, չ'եղնա մամ մի ու տղա մի...» (Տիգրանակերտ), «Կեր ու կեր, կեր ու կեր, մէկ խէր ու մէր, մէկ լաճ (Խիզան), «Կեր ու չ'կեր, քան զԱստուած աղէկ չ'կեր», «Կ'էլնի, կ'էլնի մէկ մարդ, մէկ կնիկ..., «Կա ու չկա՝ մէկ թագաւոր կա...», ևն: Այս և այլ սկսվածքային բանաձևերը միանգամից ապահովում են հեքիաթի գործողությունների ժամանակագրական կարգը, որին անորոշ ձևով հաջորդում է այն տարածքն ու միջավայրը, որից սկիզբ է առնում հերոսի ուղևորությունը՝ իրեն առաջադրված խնդիրները լուծելու: Հետևաբար, սկսվածքային բանաձևերն արտահայտում են գործողության տեղի և ժամանակի անորոշության գաղափարը:

Միջնամասային բանաձևերն իրենց բնույթով բազմագործառույթ են և հազեցած են լեզվական արտահայտչամիջոցների բազմազանությամբ: Գ. Սրվանձտյանցի գրառած հեքիաթների միջնամասային կայուն բանաձևերում առանձնանում են քնի և արթնացման մոտիվի բանաձևային զարգացումները, որոնք աղերսվում են «Մասնա ծոեր» էպոսի նմանատիպ մոտիվ-բանաձևին: Սույն մոտիվ-բանաձևը սրվանձտյանական հեքիաթներում ձևավորվել է քնած դևի (կամ «դևու հազար տարեկան պառաւ»-ի), իսկ էպոսում՝ քնած Մսրա Մելիքի արթնացման շուրջ: Այս մոտիվ-բանաձևը, ընդհանրություններով հանդերձ, հանդես է գալիս հավելումներով, տեղաշարժերով, հաջորդականության խախտումներով և այլն, ինչն էլ հիմք է դառնում բանաձևային բազմազանության թե՛ հեքիաթներում և թե՛ էպոսում:

Սրվանձտյանցի գրառած հեքիաթներում եզրափակիչ բանաձևերի տեսակները քիչ են և միօրինակ: Ըստ էության, դրանք պարունակում են և՛ մաղթանք, և՛ հեքիաթի պատումից բխող եզրակացություն, և՛ ավանդական «երկնքից երեք խնձոր» վերջընթեր ավարտ: Եզրափակիչ բանաձևի գերակշիռ տեսակը ձևավորվել է «մուրատին» հասնելու ցանկության տարբերակներով, որոնցում գլխավոր դերը վերապահված է աստծուն, սուրբ Մարգարին, մուրագատու Մշո Սուրբ Կարապետին և երկնային փառքին, օրինակ՝ «Իննք հասան ուրանց մուրատին: Աստուած մե հասու մե մուրատին»:

Գարեգին Սրվանձտյանցի գրառած հեքիաթների քննությունը ցույց է տալիս, որ դրանցում օգտագործված սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ կայուն բանաձևերն իրենց ինքնատիպությամբ ու բազմազանությամբ ներկայացնում են արևմտահայ գավառների ազգաբնակչության լեզվամտածողությանը, կյանքին, հոգեկերտվածքին ու սովորություններին բնորոշ խտացումներ՝ գործառության լայն ընդգրկումով:

Մարինե Խեմյան, բ.գ.թ. (ՀԱԻ)

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԳՐԱՌԱԾ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՆՎԻՐԱՏՈՒ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայ հեքիաթագիտությունն ընդգրկում է հեքիաթների գրառումը, հրատարակությունը և ուսումնասիրությունը, որոնք երբեք տարանջատված չեն եղել. գրառմանը զուգահեռ դրանք հրատարակվել և ուսումնասիրվել են: Հեքիաթների գրառումը մեզանում սկսվել է դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից, որի հիմքը դրել է բանասեր, բանահավաք, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցը. նրա գործունեությունն ազդակ է դարձել հայ ժողովրդական բանավոր ավանդության հետագա գրառման և պահպանման համար: Գ.Սրվանձտյանցն իր գրառած 35 հեքիաթները հրատարակել է «Մանանայ» (1876) և «Համով-հոտով» (1884) գրքերում: Գրառված հեքիաթները բոլորն էլ ունեն գուգահեռներ Հայաստանի տարբեր տարածաշրջանների և այլ ժողովուրդների հեքիաթների հետ: Հեքիաթի հերոսի գործողությունները խարսխվել են մարդու բազմադարյան գիտելիքների վրա և ուղեկցվել հարակից կերպարների շարքով, որոնք նպաստել են հեքիաթի գլխավոր խնդրի լուծմանը: Այդպիսի կերպարների շարքին են դասվում նվիրատուներն ու խորհրդատուները, որոնք Սրվանձտյանցի հեքիաթներում հարուստ են իրենց բազմազանությամբ ու գործառույթներով: Զեկույցում քննության են առնված մարդ և մարդակերպ, կենդանի ու թռչուն խորհրդատուներն ու նվիրատուները, ինչպես նաև հերոսի ճանապարհին հանդիպած աստծո կողմից ուղարկված՝ գերբնական հատկություններով գործող անձինք:

Հատկանշական է, որ Սրվանձտյանցի գրառած որոշ հեքիաթներում գործառույթների առումով նույնանում են նվիրատուների ու խորհրդատուների մի շարք կերպարներ, ինչպիսիք են՝ աստված-ծերունի-դերվիշ-ճգնավոր, թագավոր-հայր, թագուհի-մայր-պառավ, արքայադուստր-աղջիկ-քույր, արքայազն-երիտասարդ, ճնճղուկ-աքաղաղ, ևն: Դասական հրաշապատում հեքիաթի համար բնորոշ է հերոսի նախնական փորձությունը (ստուգումը), որն ավարտվում է օգնական կամ հրաշագործ միջոց ստանալով (նվիրատվությամբ): Փորձությունն ավելի հաճախ հմայական արգելքի (տաբու) վրա է խարսխված, որի խախտման հանգամանքով են պայմանավորված հերոսի հետագա գործողությունները: Հերոսն ուղևորվում է իր հիմնական խնդիրն իրագործելու և ընթացքում ենթարկվում է լրացուցիչ ու հիմնական փորձությունների: Նախ նրան ուղղորդելու համար հեքիաթ է մուտք գործում խորհրդատուն (աստված,

ծերունի, հյուրընկալ պառավ, արքայադուստր նն), այնուհետև ձեռք է բերում հրաշագործ առարկաներ (թուր, նետ ու աղեղ, կուժ, սանր, ածելի, քսակ, գլխարկ, դուղուկ, մատանի, մազ, փետուր նն): Հերոսին հաճախ խորհրդատվությամբ օգնության է հասնում նրա մեռած նախնու հոգին՝ երագում կամ կերպարանափոխված (ծերունի, ճնճղուկ, աքաղաղ նն): Սրվանձտյանցի գրառած որոշ հեքիաթներում որպես խորհրդատու և նվիրատու են հանդես գալիս կենդանիներն ու թռչունները. նրանք ունեն մարդկային հատկանիշներ, գիտեն հերոսի անցնելիք ճանապարհի, նրա առաջ ծառացող վտանգների մասին և իրենց խորհուրդներով ուղղորդում են նրան: Կենդանիներն ու թռչունները երբեմն հերոսին օգնում են՝ ի նշան երախտագիտության, նրանք անդրաշխարհի հետ կապող օդակ լինելուց զատ՝ կարող են կանչի բանաձևով մոտենալ հերոսին (հերոսի կողմից փետուրը, բուրդը, մազը կրակին տալու միջոցով) և նրան դուրս բերել անելանելի իրավիճակներից:

Գարեգին Սրվանձտյանցի գրառած հեքիաթներում հերոսի գործողություններին նպաստող օգնականների գերակշիռ մասը մարդ և մարդակերպ նվիրատուներն ու խորհրդատուներն են, որոնք, ինչպես և մյուս օգնականները, հայ և այլ ժողովուրդների հեքիաթների նմանատիպ կերպարների հետ ընդհանրություններ ունենալով հանդերձ՝ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ:

Վիկտոր Կատվայան, բ.գ.դ. (ԼԻ)

Գ.ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՒ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ

Ինչպես հանրային կյանքի տարբեր ոլորտներում, այնպես էլ գիտության մեջ ցանկացած առաջընթաց պայմանավորված է նախորդ փուլերի ձեռքբերումներով ու միաժամանակ հիմք է՝ հետագա զարգացումների համար: Այդ առումով, անշուշտ, մեծ կարևորություն ունի գիտության որևէ ոլորտի զարգացման ընթացքի դիտարկումը, անցյալի երախտավորների վաստակի արժևորումն ու գնահատումը, բեկումնային դեր ունեցած, հաճախ էլ հանիրավի մոռացված աշխատանքների ու նվաճումների արձանագրումն ու կարևորումը: Բանասիրությունն ըստ արժանվույն գնահատել է Գ.Սրվանձտյանցի վաստակը, նրան համարել հայ բանագիտության մեծ երախտավոր, մեր ժողովրդի հոգեմտավոր ժառանգության «շնչառոր հանրագիտարան», հայ բանահավաքչության ռահվիրա՝ ուղի հարթող առաջամարտիկ: Նշվել է, որ նա հայ ժողովրդական գրականությանը, ազգագրությանը և բանասիրությանը մեծ և անփոխարինելի նպաստ է բերել:

Գ. Սրվանձտյանցը միայն բանահավաք, բանագետ ու ազգագրագետ չէր: Ունենալով խորաթափանց և վերլուծական միտք՝ նա իր հավաքած նյութը ներկայացրել է գիտական մեկնաբանություններով, հետաքրքրական դիտողություններով՝ հընթացս հանդես բերելով լեզվին ու բարբառներին առնչվող մի շարք հարցերի ու իրողությունների խորը իմացություն, դրանց վերաբերյալ գիտականորեն ճիշտ պատկերացումներ: Սրվանձտյանցի աշխատանքներում առկա լեզվագիտական դիտարկումներն ու

վերլուծությունները ժամանակին բարձր է գնահատել Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Սերովբե Տերվիշյանը՝ նշելով հայ լեզուն քննողի համար դրանց կարևորությունը: Սրվանձտյանցն ընդգծել է Հայաստանի գավառներում գործածվող հայերենի տարբեր դրսևորումները գրառելու և պահպանելու, դրանք գրագետներին ծանոթ և սիրելի դարձնելու անհրաժեշտությունը: Ժամանակի համար խոշոր առաջընթաց պետք է համարել բարբառների էության, դրանց առաջացման և գործածության խնդիրների՝ Սրվանձտյանցի բերած ըմբռնումը: Նա իրավացիորեն նկատել է, որ հայ ժողովուրդը, հետևաբար նաև՝ ժողովրդի լեզուն, ավելի հին է, քան գրաբարը: Դարերն ու իրադարձությունները ազդել են ինչպես ժողովրդի կյանքի ու բարքի, այնպես էլ լեզվի վրա, և նկատելի է, որ Հայաստանի յուրաքանչյուր գավառ խոսքի յուրահատուկ ոճ ու բառերի արտասանության առանձին եղանակ ունի, ինչպես որ տարբեր են իր կյանքի «հանգամանքն ու պարագայքը», և պատահական չէ, որ նույն առարկան տարբեր վայրերում տարբեր անվանումներ ունի: Կարևոր է նաև այն դիտարկումը, թե բանավոր գրույցներ հորինող վիպասացը խոսքը կազմում է իր բնական տեղի սովորության, կլիմայի, իր շուրջ եղած կենդանիների և վայրերի անվամբ, նմանությամբ, նկարագրով:

Սրվանձտյանցի գործերում հստակորեն երևում է բարբառների և լեզվի պատմության կապի գիտակցումը: Նա անհրաժեշտ է համարում գրի առնել կամ նկարագրել տնական, գեղջկական, քաղաքական և կրոնական արարողությունները, առածները, երդումները, անեծքները, օրհնանքները, երգերը, պարերը, մանուկների խաղերը, որովհետև դրանք առհասարակ կյանքի և լեզվի պատմությունն են կազմում: Սրվանձտյանցը շարունակ ընդգծել է բարբառային բառապաշարի հարստությունը և անհնարին համարել, որ մեկը կարող լինի Հայաստանի բոլոր գավառների բնակիչների գործածած բառերը հավաքել: Ուստի, նոր բառեր կազմելուց բացի, անհրաժեշտ է օգտագործել ժողովրդի ստեղծած ավելի բնական բառերը: Իր տարբեր գրքերում Սրվանձտյանցն, ըստ իրականության գանազան ոլորտների, բերում է նման բառերի բազում օրինակներ, տալիս է բացատրություններ, անում մեկնաբանություններ, երբեմն էլ՝ ստուգաբանություններ: Այս կարգի աշխատանքները հաճախ ունեն նաև ճանաչողական արժեք:

Բանագետը խոսել է նաև բարբառային հայերենի հնչյունա-քերականական մի շարք առանձնահատկությունների մասին, կատարել առանձին բարբառների վերաբերյալ ուշագրավ դիտարկումներ: Ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ հարևան բարբառները կարող են փոխադարձ ազդեցություններ ունենալ և նմանվել իրար: Շատ կարևոր է նաև այն, որ Սրվանձտյանցը, որքան հնարավոր էր, բարբառային խոսքին հարազատ է մտացել՝ թե՛ էպոսի պատումը, թե՛ հեքիաթներ ու ժողովրդական բառ ու բանի այլ նմուշներ գրառելիս: Այդ գրառումները, բարբառային բառերի բառարանների հետ միասին, կարևոր նյութ են՝ բարբառների բառապաշարը, հնչյունա-քերականական հատկանիշները և դրանց պատմական զարգացումը դիտարկելու առումով: Ասվածը թույլ է տալիս փաստել, որ Գ. Սրվանձտյանցը հայ իրականության մեջ բարբառային լեզվի առաջին արժևորողներից ու ուսումնասիրողներից էր, նրա մի շարք դիտարկումներ այսօր էլ արդիական են և ուսանելի:

Ալինա Կիրակոսյան (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ. ԿԵՆՍԱՍՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայ բանահավաքչության գործի սկզբնավորող և կազմակերպիչ Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցը ծնվել է Վանում, 1840 թ. նոյեմբերի 17-ին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, այնուհետև սովորել է Վարազավանքի ժառանգավորաց դպրոցում, որտեղ աշակերտել է նշանավոր Մկրտիչ Խրիմյանին: Եղել է «Արծուի Վասպուրական» ամսաթերթի փոխխմբագիրը և Խրիմյանի Հայրիկի հետ, որպես նվիրակ ու քարոզիչ, 1860-1861 թթ. շրջագայել է Արևելյան Հայաստանի զանազան գավառներում՝ գրելով ազգագրական և հրապարակախոսական բնույթի հոդվածներ: 1862 թ. նա Մշո Սուրբ Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանում տնօրենուսուցիչ էր, 1863-1865 թթ.՝ «Լրատար Արծուիկ Տարօնոյ» նորաբաց երկշաբաթաթերթի խմբագիրը: Սրվանձտյանցը «Վարդ» գրական անունով թղթակցել է Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի և Թիֆլիսի մի շարք պարբերականների՝ «Մասիս», «Արևելեան մամուլ», «Կռունկ հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» ևն: 1866 թ. Կոստանդնուպոլսում հրատարակել է նրա «Նոր ընթերցարան» դասագիրքը, որը վերահրատարակվել է երկու անգամ (1875 թ. և 1884 թ.): Սրվանձտյանցի մուտքը հայ գրականությունն նշանավորվել է հայրենասիրական թատերգություններով՝ «Ողբերգութիւն մեծին Սահկայ Պարթեւի եւ անկուճս Արտաշրի Արշակունւոյ» (1860-1870 թթ.) և «Շուշան Շաւարշանայ» (1875 թ.):

1867 թ. Գ. Սրվանձտյանցը Կարինում ձեռնադրվել է վարդապետ և որպես քարոզիչ գործուղվել Վան: 1867-1869 թթ. ստանձնել է Կարինի վարժարանների լիազոր տեսչի պաշտոնը: 1869 թ. նշանակվել Մշո Սուրբ Կարապետ վանքի վանահոր փոխանորդ: 1872թ. նա մասնակցել է Վանում կազմակերպված «Միութիւն և փրկութիւն» ազգային-ազատագրական գաղտնի խմբակի ստեղծմանը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի հատուկ կոնդակով Սրվանձտյանցը գործուղվել է Արևմտյան Հայաստան, ծանոթացել մեր ժողովրդի սոցիալ-քաղաքական ծանր վիճակին, իր ակնարկներում ու թղթակցություններում արծարծել ազգային-ազատագրական պայքարի գաղափարներ: Շրջագայությունների ընթացքում Սրվանձտյանցը գրի է առել մեր ժողովրդի բանավոր ստեղծագործության լավագույն նմուշները, նկարագրել ազգային ծեսերը, սովորույթները, հավատալիքները և պարբերաբար հրատարակել իր «Հնոց և նորոց» (1874), «Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» (1874), «Մանանայ» (1876), «Համով-հոտով» (1884), «Թորոս Աղբար» երկհատոր (1879-1884) նշանավոր ժողովածուները: «Թորոս Աղբար»-ում և համանուն ռուսերեն լեզվով հրատարակության մեջ (1887) շոշափված են երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության և հայերի արտագնացության ու գաղթականության հետ կապված խնդիրները:

1879-1881 թթ. Սրվանձտյանցը եղել է Վանի վիճակավոր՝ հոգևոր առաջնորդի փոխանորդ-օգնականը, մասնակցել «Սև խաչ» հայրենասիրական գաղտնի կազմակերպության աշխատանքներին: Սրվանձտյանցի գործունեությունը չի վրիպել Օսմանյան կառավարության ուշադրությունից, նա առնվել է գաղտնի հսկողության տակ

և 1881 թ. կառավարության հրամանով հեռացել Վանից՝ առժամանակ վիճակավոր առաջնորդի պաշտոն վարելով Բաղեշում, ապա Խարբերդում: 1886 թ. Էջմիածնում օծվել է եպիսկոպոս, նշանակվել Տրապիզոնի, այնուհետ՝ Տարոնի վիճակավոր առաջնորդ, միաժամանակ՝ Մշո Սուրբ Կարապետ վանքի վանահայր: Սուլթանի դժգոհության պատճառով Գարեգին Սրվանձտյանցը, որպես քաղաքականապես անբարեհույս անձ, պատրիարքի հրամանով պաշտոնազրկվել է և ուղարկվել Կոստանդնուպոլիս, որտեղ էլ 1892 թ. նոյեմբերի 17-ին վախճանվել է Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցում:

Թամար Հայրապետյան, բ.գ.դ. (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆԶՏՅԱՆՑԻ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ-ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

19-րդ դարի երկրորդ կեսից հայ բանագիտության ու ազգագրության ասպարեզում ծավալված հավաքչական բուռն գործունեությունը՝ պայմանավորված ազգային-լուսավորչական շարժման ու ինքնագիտակցության վերելքով, ընդգրկում է պատմական Հայաստանի ազգագրական տարբեր շրջանները: 70-80-ական թվականները բնութագրվում են որպես տարերային բանահավաքչության և հարցարանների ստեղծման ժամանակաշրջան, երբ ժողովրդի ոչ-նյութական մշակութային ժառանգության՝ տոների, ծեսերի ու հավատալիքների, բանավոր խոսքի տարբեր սեռերի ու ժանրերի որոնումը, գրառումն ու հրատարակությունը դառնում են ժամանակի առաջավոր մտավորականության հիմնական զբաղմունքը: Կրթամշակութային վերելքի շրջադարձային այդ փուլում ժողովրդագիտական նյութերի հավաքչության անձնադիր նախաձեռնողն ու կազմակերպիչը Գարեգին Սրվանձտյանցն էր (1840-1892), որի նախաձեռնած բանահավաքչական գործունեությունը հանրային մեծ արձագանք է գտնում: Մեթոդաբանական միասնական սկզբունքների բացակայության պայմաններում Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց...» աշխատությունը դառնում է աննախադեպ ծրագիր-հարցարան, որն ունենում է բազմաթիվ հետևորդներ: Սրվանձտյանցի մյուս մեծագույն ծառայությունը հայ բանագիտությանը՝ «Մասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հայտնաբերումն է, գրառումն ու հրատարակումը:

«Ծրագրում» թվարկվում են գրի առնվելիք թեմաները, ի շարքս որոնց կարևորվում են հարսանեկան ծեսի բաղկացուցիչ արարողությունները՝ խնջույքը, ծիսական հանդերձանքը, երաժշտությունը, պարը, պսակը: «Խաղ» բառի գործածության տակավին ընդհանուր բնույթի առումով ուշագրավ են Սրվանձտյանցի հաղորդած տեղեկությունները՝ հայոց ավանդական սոցիոնոմատիվ մշակույթում մանկապատանեկան խաղերի թե՛ տոնածիսական, թե՛ մարմնակրթական ռազմականացված բնույթի և թե՛ երգ ու տաղի իմաստով: «Ծրագրում» Գ. Սրվանձտյանցն առաջին անգամ նորափեսայի սփռած դրամները համեմատում է հայտնի վիպական երգում տեղացող ոսկե ու մարգարտե անձրևի դիցաբանական պատկերացման հետ: Սրվանձտյանցը «Գրոց ու բրոց...»-ում «Մասունցի Դավիթի» անդրանիկ պատումը ընթերցողին է ներկայացնում ոչ միայն որպես գրառված բանահյուսական նյութ, այլև հանդես է գալիս իբրև մեր ժողովրդական հերոսավեպի առանցքային դրվագների՝

ծեսերի, հավատալիքների, կրոնական և առասպելաբանական պատկերացումների, աստվածաշնչյան ավանդությունների որոշ հարակցումների և տեղանունների առաջին մեկնաբան:

Թեև Սրվանձտյանը չի գրել ժողովրդագիտական որևէ ծավալուն կամ ամբողջական հետազոտություն, բայց տարբեր առիթներով արված նրա դիպվածային կամ հպանցիկ նկատողությունները, ինտուիտիվ կռահումներն ու դիտարկումները խորը հարցադրումների են մղել հետագա ուսումնասիրողներին:

Լուսինե Հայրիյան, բ.գ.թ. (ՀԱԻ)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ Գ.ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅԻ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19-րդ դարի երկրորդ կեսին, մասնավորապես՝ 70-80-ական թվականներին, բանահյուսության հետազոտության ընթացքը ձեռք է բերում գիտակցված բնույթ, և սկզբնավորվում է հայ ժողովրդագիտության վերընթաց շարժումը. «Գրոց ու բրոց և Մասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» գրքով (Կ. Պոլիս, 1874 թ.) Գ. Սրվանձտյանը դնում է բանահավաքչական շարժման հիմքը՝ բացելով նաև հայ գրականության կենսատու երակներից մեկը: Սրվանձտյանցի նպատակադրումներն ու ակնկալիքները, բանահավաքչական սկզբունքներն ու բանագիտական հայացքները, բանահյուսական ստեղծագործությունների բնութագրումներն ու ճշմարտացի ընդհանրացումները հիմնականում ներկայացվում են «Գրոց ու բրոց...» (1874 թ.), «Հնոց և նորոց» (1874 թ.) Մանանայ» (1876 թ.), «Համով-հոտով» (1884 թ.) ժողովածուների առաջաբաններում, որոնք ունենին ծրագրային բնույթ: Սրվանձտյանը հիմնական գծերով շարադրում է այն ուղենիշները, որոնք կարող էին օժանդակել և ուղղորդել տարբեր հետաքրքրություններ ունեցող ընթերցողներին:

Սրվանձտյանցի գործունեությունը շրջադարձային պատմամշակութային նշանակություն ունեցավ: Հանրային ջերմ ընդունելության ու ոգևորության բուռն ալիքի մասին են վկայում ժամանակի մտավորականության (Գ. Պատկանյան, Ղ. Ալիշան, Գր. Խալաթյանց, Մ. Էմին, Ա. Շահինազարյան, Ս. Մանդինյան, Պ. Դելիյան, Ա. Արփիարյան, Գ. Օտյան, Հ. Պարոնյան, Բ. Քեչյան, Ս. Տեր-Սարգիսենց (Տնկանց), Գ. Շերենց, Լ. Բաշայյան, Տիրան Զրաքյան, Վ. Փափազյան և այլք) գրախոսականները, հոդվածները, մեծաքանակ նամակներն ու բազմաթիվ անդրադարձները, որոնց զգալի մասը հրապարակվել է «Մանանայ» և «Համով-հոտով» ժողովածուներում:

Հիշարժան է, որ, օրինակ, Բաֆֆին ոչ միայն համեմատական քննության և մասնավոր վերլուծության ենթարկեց «Գրոց ու բրոց...»-ը՝ տեքստին կցելով համապատասխան ծանոթագրություններ ու մատնանշելով որոշակի թերություններ, այլև Սրվանձտյանցի ժողովածուների հարուստ նախանյութը աստղծ դարձրեց իր գրական ստեղծագործությունների համար: Սրվանձտյանցի բազմոլորտ գործունեությունն արժևորող գեղագետներից էր՝ նրա աշակերտ Գեղամ Տեր-Կարապետյանը (Գեղամ), ով պաշտամունքի հասնող հարգանք ու սեր էր տածում իր ուսուցչի հանդեպ՝ բարձր գնահատելով նրա գրական, բանահավաքչական և մանկավարժական վաստակն ու

ահռելի ներդրումը մշակութային և հանրային կյանքի կազմակերպման գործընթացում: Այս բացառիկ հոգեկցությունը պայմանավորված էր ուսուցիչ-աշակերտ կապի ամրությամբ. Գեղամը Մշո Ս. Կարապետ վանքում աշակերտել էր Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցին և իր բազմաբեղուն գործունեության ընթացքում դարձել իր ուսուցչի հետևորդը, նրա գործի արժանավոր ու հավատարիմ շարունակողը: Ունենալով համախոհներ և հետևորդներ՝ Սրվանձտյանցը հիմք դրեց ինչպես բուն բանահավաքչության պատմությանը, այնպես էլ բանագիտական հիմնահարցերի ուսումնասիրման ավանդույթներին:

Միմոն Հմայակյան, բ.գ.թ. (ՀԱԻ), Ինեսա Հովսեփյան (ՀԱԻ)

ՇԻՐԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ՍՐԱՎԱՆՁՏՅԱՆՑԻ «ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ ԵՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԿԱՍ ՄՀԷՐԻ ԴՈՒՌ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՐԻՇ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Շիրինը Իրանի՝ 7-րդ դարի ամենահռչակավոր թագուհին էր: Նա Խոսրով Ապրվեզ արքայի (570-628 թթ.) կինն էր, իսելացի էր ու շատ գեղեցիկ: Ըստ Սեբեոսի՝ Շիրինը ծնվել էր Էլամում, սակայն ջատագոժն էր Հայոց քրիստոնեական հավատքի: Հայաստանում Շիրինի մասին առաջին գրույցը գրառել է Գ. Սրվանձտյանցը, ավանդազրույցը՝ Ն.Սարգիսյանը, հեքիաթը՝ Ս. Մովսիսյանը: Հայաստանում վկայված են նաև Շիրին անունով մի շարք տեղանուններ: Ջարգացած միջնադարում Շիրինը իսլամական բանաստեղծների (Ֆիրդուսի, Նիզամի, Նավոյի, Ամիր-Խոսրով ևն) սիրած հերոսուհի էր: Նշված բանաստեղծների պոեմներում կան շատ դրվագներ, որոնք առնչվում են արևելաիսլամական աշխարհում Հայաստանի և հայերի մասին եղած պատկերացումներին: Այլշեր Նավոյիի «Ֆարհադ և Շիրին» պոեմի հերոսների համար, օրինակ, եթե աշխարհում կա դրախտ՝ ապա այն Հայաստանում է: Զեկուցման մեջ կատարված են համադրություններ, Նավոյիի այս ստեղծագործության և հայ մատենագրական ու ժողովրդագրական համապատասխան տվյալների հետ՝ ապացուցելու համար, որ՝

ա. Նավոյին ծանոթ է եղել Մովսես Խորենացու աշխատությանը,

բ. Նավոյիի նկարագրած՝ Շիրինի հայրենիք-դրախտավայրը Վասպուրականի Հայոց-ձոր գավառն է,

գ. այստեղ Շիրինի սիրեցյալ Ֆարհադի փորած ջրանցքը «Շամիրամի առու»-ն է՝ «Մինուայի ջրանցքը» կառուցված մ.թ.ա. 8-րդ դարում,

դ. հայկական ավանդազրույցներից մեկում նկարագրված՝ Ֆարհադի և Շիրինի գերեզմանները Ճմիրնի (Ալթին-թեփեի) ուրարտական դամբարաններն են:

Կարեն Հովհաննիսյան, պ.գ.թ. (ՀԱԻ)

«ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ» ՍՐԲԱՎԱՅՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ՝
ԸՍՏ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ

Զեկուցման մեջ ներկայացվում է «Թուխ Մանուկ» սրբավայրերի մասին հայագիտության մեջ արտահայտված առաջին կարծիքը, որի հեղինակը՝ հայ ազգագրության և բանահավաքչության նահապետ Գարեգին Սրվանձտյանցն է: Այդ կարծիքը կարելի է բաժանել երեք մասի և յուրաքանչյուրին առանձին անդրադառնալ՝ օգտագործելով ոչ միայն Սրվանձտյանցին հաջորդող մյուս հավաքողների (Բաֆֆի, Վահան վարդապետ Տեր-Մինասյան, Մ. Միրախորյան, Պ. Պոռչյան և այլք), այլև մեր դաշտային ազգագրական նյութերը: Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի մոտեցումն իսպառ զերծ է օտար՝ արևմտյան գիտական որևէ տեսության ազդեցությունից, որ սկսվել է իր ժամանակից և ցարդ շարունակվել: Գարեգին եպս. Սրվանձտյանցը, լինելով ոչ միայն բանահավաք, այլև բանարվեստի կրող, անկողմնակալ է ներկայացնում իր նյութը և բնագործն զգում նրբերանգները: «Թուխ Մանուկ» սրբավայրերի մասին նրա և իր գործն անմիջապես շարունակող հայ անվանի բանահավաքների նյութերն ամբողջությամբ հաստատվում են մեր օրերում ՀՀ տարածքում սփռված շուրջ 200 «Թուխ Մանուկ» սրբավայրերի ուսումնասիրության արդյունքներով:

Սուսաննա Հովհաննիսյան, բ.գ.դ. (ԳԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ՝

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՇՐՁԱԳԾՈՒՄ

Բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակումը Հովհաննես Թումանյանի գրական նախասիրությունների հիմնական ոլորտն է: Նա ակնածանքով էր վերաբերվում բանագետի ու բանահավաքի գործին ու կոչմանը: Հենց այս համատեքստում պետք է նկատել Սրվանձտյանի գործի նկատմամբ բանաստեղծի մեծագույն հարգանքն ու բարձր գնահատականը: Թումանյանն իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում միշտ դիմում էր Սրվանձտյանի գրի առած ազգային գանձարանի ընդերքին: Գարեգին Սրվանձտյանի գրի առած հեքիաթների, ժողովրդական երգերի, հանելուկների, սասցվածքների, առածների ժողովածուների, մասնավորապես՝ «Համով-հոտով»-ի և «Մանանայ»-ի նյութերի հիման վրա գրվեցին բանաստեղծի «Քաջ կիվիվը», «Արտուտիկը», «Ճնճուկներ», «Փոքրիկ երկրագործը» ստեղծագործությունները: Գ. Սրվանձտյանի գրի առած ավանդազրույցների հիման վրա են ստեղծվել «Գառնիկ

ախպերը», «Որբը» բալլադները: Բանաստեղծի լավագույն հեքիաթների սկզբնաղբյուր բնագրերը դարձյալ Սրվանձտյանի ժողովածուներում են: «Համով հոտով»-ից բանաստեղծը մշակեց «Պոչատ աղվեսը» («Անձեղն և յուր պոչիկ») և «Քաջ Նազարը» («Դրժիկոն»), իսկ «Մանանայ»-ից՝ «Անխելք մարդը» (1894), «Խոսող ձուկը» («Իշխանագուն իմը բախտը ու աղվեսին խելքը») և «Կոնատ աղջիկը» («Նահապետենց աղջիկը»):

Ուշագրավ են այն տարբերությունները, որոնք առկա են Սրվանձտյանի գրի առած ժողովրդական տարբերակների և բանաստեղծի գեղարվեստական մշակումների միջև: Օրինակ՝ 54 տողանոց ժողովրդական երգի նախօրինակից Թումանյանն իր «Փոքրիկ երկրագործ»-ի («Եկավ գարուն, եկան հավքեր...») համար ընտրել է միայն առաջին 9 տողերը: «Որբը» բալլադում, ի տարբերություն բնագրի, որտեղ եղբորը հափշտակում է արծիվը կամ որևէ այլ գազան, Թումանյանի բալլադում քրոջն առնանգում է թուրքը. այս փոփոխությունը միանգամայն նոր իմաստ ու բովանդակություն է հաղորդում բալլադին:

«Սասունցի Դավիթ» էպոսի 16 պատումներից մեկը, որից օգտվել է Թումանյանը, Սրվանձտյանի գրի առած տարբերակն է, մասնավորապես նրանում առկա՝ Սասունից փախչող Կոզբադինի՝ կանանց ուղղված խոսքը: Բանաստեղծն ուշի-ուշով ուսումնասիրել է Սրվանձտյանի պատումը նաև այն պատճառով, որ նա ոչ միայն էպոսի առաջին հրապարակողն էր, այլև դրա առաջին հետազոտողներից մեկը: Եւ Սրվանձտյանը, և՛ Թումանյանը էպոսի մասին իրենց ուսումնասիրություններում առանձնացնում են անախրոնիզմը՝ որպես սովորական երևույթ էպոսների համար, որը չի խանգարում նրա ամբողջությանը: Սակայն ի տարբերություն Սրվանձտյանի և էպոսի մյուս հետազոտողների մոտեցումների՝ Թումանյանը չէր կարևորում պատմական ատաղձը: Թումանյանն ընթերցում էր Սրվանձտյանի գրքերը՝ նաև որպես գիտնական-հետազոտող: Նա միջնադարյան գրականության մեջ սիրո հոգեբանության տարբեր դրսևորումներին վերաբերող հարցերին անդրադառնալիս՝ մանրագնին քննության է ենթարկել Սրվանձտյանի աշխատությունները: Որպես Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ՝ Թումանյանը գրական երեկոներից մեկը ծրագրել էր նվիրել Սրվանձտյանի գրական ժառանգությանը: «Հայոց գրական լեզվի խնդիրը» հոդվածում Աբովյանին ու Սրվանձտյանին բանաստեղծը բնորոշում է հայոց գրական պարտեզի «կենդանի, փարթամ ու շքեղ ծաղիկներ»:

Սրվանձտյանի աշխատությունները Թումանյանի համար եղել են մշտական հետաքրքրության առարկա, ներշնչել բանաստեղծին: Դրանցում Թումանյանը հայտնաբերել է իր ստեղծագործական տարերքին ու գեղարվեստական խառնվածքին համահունչ սյուժեներ, կերպարներ ու բնավորություններ, ժողովրդական մտածողությանը հարազատ կառուցվածք ու լեզվառճական դրսևորումներ: Այս ամենը նա վերստեղծել է՝ պահպանելով ժողովրդական ոգու և մտածողության հարազատությունը, պարզությունը: 20-րդ դարի սկզբի մեծանուն բանահավաք Գ.Սրվանձտյանի շնորհիվ է նաև, որ գեղարվեստական մշակումների ասպարեզում բացառիկ ու անմրցելի անուն Թումանյանը հայ գրականությունը հարստացրեց փայուն երկերով:

ԿԱՐՃԱՍՈՒՅԹ ԲԱՆԱԶԵԻԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Գարեգին Սրվանձտյանցը հայ ժողովրդի մշակույթի երախտավորների շարքում առաջիններից էր, որ իր հայտնաբերած հոգևոր գանձերով մեծապես նպաստեց հայ բանագիտության, ազգագրության, հնագիտության և գրականության զարգացմանը: Ի պաշտոնե շրջագայելով Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր գավառներով և մոտիկից ծանոթանալով ժողովրդի կյանքին, կենցաղին ու սովորույթներին՝ նա միաժամանակ հետամուտ է լինում, հայտնաբերում և գրի է առնում բազմաթիվ ազգագրական ու բանահյուսական նյութեր՝ իր շուրջը համախմբելով գյուղաբնակ և քաղաքաբնակ բազմաթիվ մտավորականների և հեղինակ-կատարողների: Կարևորելով ժողովրդագիտական նյութերի գրառման գործընթացը՝ Սրվանձտյանցը մեծ տեղ է հատկացնում նաև բազմադարյա հոգևոր մշակույթը ստեղծող, կրող, պահպանող ու փոխանցող այդ ժողովրդի ստեղծագործ կարողություններին. «Ժողովրդեան միտքն ու բանականութիւնը չէր կարելի փսալ անգործ և անզգայ. նա իր տեսած, ըրած ու լսած անցքերը կը խօսէր բերանացի, կը շարագրէր, կը վիպասանէր բանացի. և իր զգացած սերն ու թախիծ կ'երգէր կը մրժսջէր թէ յանձին առանձին և թէ յընկերութեան. անշուշտ երևակայութիւնն ալ բան մը կը յաւելուր բուն եղածին վրայ, բան մ'ալ լսողը կը յաւելուր՝ երբ ինքն ևս այլում կը հաղորդէր» («Մանանայ», 1876, էջ 148):

Մույն հաղորդման մեջ քննության ենք առնում ասույթաբանական ժանրերի՝ առած-ասացվածքների, անեծք-օրհնանքների, երդումների և հավատալիքների տարաբնույթ արտահայտությունների կիրառությունը Սրվանձտյանցի ժողովածուներում և փորձ ենք անում բացահայտելու դրանց դերն ու կիրառման դրդապատճառները: Սրվանձտյանցի հավաստմամբ՝ իր գրառումներում բավական մեծ թիվ են կազմել կարճասույթ բանաձևային կառույցները (առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանք-բարեմաղթանքներ և երդումներ), սակայն դրանք նա հարկ չի համարել առանձին հրատարակությամբ ներկայացնել, քանի որ արդեն «անոնցմէ շատը ազգ. ամսական հանդէսներու և ուրիշ հրատարակութեանց մէջ տպուած, շատ կարևոր չթուեցաւ ինձ կրկնել զանոնք» (Երկեր, հ. 1, էջ 497): Ժողովրդական բանարվեստի այս «մանր ժանրերի» նմուշներն առկա են հիփսականում նրա տեղագրական, բնակիչների կյանքի հանգամանքների, ընտանեկան սովորույթների նկարագրություններում, ինչպես նաև հեքիաթներում:

Կատարելով ազգագրագետ-բանահավաքի շնորհակալ աշխատանք՝ Սրվանձտյանցը ռեալիստորեն է ներկայացրել հայ բնակչության սոցիալ-տնտեսական գոյավիճակի և դասակարգային փոխհարաբերությունների պատկերը, աշխատավոր գյուղացիության հնավանդ ծեսերի ու հավատալիքների, կենցաղի ու սովորույթների նկարագիրը և նրանց ապրած բնական-տեղագրական միջավայրը: Եւ այս ամենի մեջ տեսնում ենք բնական ու հանրային կյանքի երևույթների մասին ժողովրդի ունեցած պատկերացումները,

հայացքները, վերաբերմունքը չարի ու բարու հանդեպ, նրա աշխարհայացքի թույլ և ուժեղ կողմերը:

Հասմիկ Մատիկյան, բ.գ.թ. (ՇՀՀԿ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅԻ՝ ՄԱՆԿԱՆՅ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ (ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ձեկուցման մեջ ներկայացնում ենք երեխային ու նրա պարագաներին առնչվող բանահյուսական պատառիկները, որոնք տեղ են գտել Գարեգին Սրվանձտյանցի գրառած նյութերում. ուղեծրում ունենք նաև տեքստային այլ հյուսվածքներ: Աշխատանքը մեկնելու ենք լեզվա-բանագիտական դիրքերից՝ համեմատական մեթոդի կիրարկմամբ:

Գ. Սրվանձտյանցի «Իմաստուն Ջուլիակն» հեքիաթի տարբերակում երեխայի և օրորոց պատկերի հետևյալ նկարագրությունը կա. «Ինկան իմաստուն մարդ փնտրել և պատահեցան տան մը ներս մտան, տեսան, որ տղան օրորոցի մէջը և մէկը չ'կայ տուն, ու օրորոց կ'օրորուի. քովի տունը մտան, նոյնպէս օրորոցը կ'օրորուի, և մարդ չկայ: /.../ Ջարմանք կը բռնէ զիրենք ու կ'իջնան տակի տունը. կը տեսնան, որ ջուլիակ մը կտաւ կը գործէ. թէլ մի կայ կապած մըքուքի մի ծայրը, թէլ մի ան սանդրին կապած. կտաւը գործելու հետ՝ թէլերը կը շարժին, և երկու օրորոց ու տանիքի եղեգն կ'երերան»: Միջտեքստային առնչությամբ գրեթե նույն բնութագիրն ունենք «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի բազմահատորյակում տեղ գտած «Ջուլիակ» հեքիաթում: Հատկանշական է այն, որ երկու հեքիաթներում էլ նշված հատվածները առանցքային են. ջուլիակի հնարամիտ լինելը կապվում է օրորոցի՝ ճղորի կապելու և օրորվելու հետ. «մարդ լե ֆքրավ, բերեց ուր վերև տանիք ծակեց, բերեց երկան փետրը հանեց տանքեն, բերեց կապեց ուր դազկրիի մաքուքն, հ'ետևե կավ բերեց, լցեց գուր ու ճծու ճղոր կապեց թելըմ»: Երկու տարբերակներում էլ գործողությունների հարուստ շարք է ներկայացվում: Երկրորդ հեքիաթում «ջուլիակ մաքուք կթալե՝ ճղոր կօրորվի» տողերը կրկնվում են՝ շեշտադրելով և ընդգծելով ջուլիակի հնարամտությունը:

Սրվանձտյանցի գրառումներում առանձնանում են նաև գովք պարունակող օրորներն ու խաղերգերը: Այս առումով նշենք «Օրօր, օրօր քուն ունիս» սկսվածքով օրորը. Պեշիկթաշը տուն ունիս, Մարգրտե յորդան ունիս... Մոր օրորերգն ու օրորելը՝ որպես մանկան խնամքի կարևոր բաղադրիչ, հիշվում է ամբողջ կյանքի ընթացքում: Մեծն բանահավաքի գրառումներում ևս ակնհայտ տողեր կան.

Աղջիկ, աղջիկ, ինչ ր կ'որտիս երերուն,
Մամիդ ինչ քաշեր է քեզի բերելուն.

Գըշեր քուն չը քըներ օրան օրբելուն:

Մանկական խաղերի բացառիկ անուններ ու վերջիններիս բացատրություններ է ամփոփում Գ. Սրվանձտյանցի Երկերի առաջին հատորը («Բառարան» խորագրով): Հիշենք մի քանիսը՝ ականջքաշուկ (խաղ մի է մանկանց. մեկը միրգ կը ձգէ գետին, որոյ վրայ կը ժողվի մանկտին...), հոլ (խաղ ինչ մանկանց), կտրոց (մանկանց իրարու ետև վազելու խաղ մը):

Гоар Меликян (ИАЭ)

ВАРИАНТЫ СКАЗКИ О «ТЫСЯЧЕГОЛОСОМ СОЛОВЬЕ» В ЗАПИСИ

Г. СРВАНДЗТЯНЦА И НАПЕЧАТАННЫЕ В «СБОРНИКЕ МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН КАВКАЗА»

70-80-е годы 19-ого века по праву считаются «золотым веком армянской фольклористики», поскольку армянская сказка, как жанр, обрела свои отличительные черты от других нарративных жанров. Именно в этот период вышли в свет первые сборники армянских народных сказок: «Մանկանց» Гарегина Срвандзтянца (1876 г., Константинополь) и «Հաւով հոսով» (1884 г., Константинополь, затем 1904 г., Тифлис), первый прак «Армянских народных сказок» Тиграна Навасардяна (1882 г., Тифлис), 1-я и 2-я части «Վանա Տաճ»-а Геворга Шеренца (1887 г., 1899 г.) и т.д.

В следствии новой политики России на Кавказе, усилиями Кавказского учебного округа в Тифлисе стал издаваться русскоязычный многотомник «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК), первый том которого вышел в свет в 1881 году и издавался до 1915 года в 44 томах. Наряду с этнографическими, историческими и лингвистическими и другими сведениями о народах, проживающих на территории Кавказа, в сборник вошли и фольклорные материалы, в том числе более 120 армянских народных сказок, репертуар которых разнообразен. В сборнике находим и волшебные, и бытовые, и сказки о животных, в основном популярные сюжеты того периода. В СМОМПК находим несколько вариантов сказки “О тысячеголосом соловье”, которые были записаны в разное время и разными собирателями. Как известно, Г. Срвандзтянец включил сказку «Ազարան Բլբուլ» в свой первый сборник «Մանկանց», и считал эту сказку классическим сюжетом. Конечно же, манера изложения и цели передачи армянских сказок в СМОМПК и у Г. Срвандзтянца в корне отличаются друг от друга. Хотя СМОМПК и имел целью помочь народам Кавказа собрать и сохранить традиционное национальное наследие, однако все материалы проходили цензуру и ощущаются нейтральность передачи сюжета, установления некоего равенства между народами, проживающими на этих территориях.

Целью данного доклада является сопоставление вышеупомянутых вариантов сказки, в частности - выявление национальных особенностей в них, а также анализ перевода

армянской сказки на русский язык и изменения текста, которые произошли в результате перевода сказки.

Հայկանուշ Մեսրոպյան, ք.գ.դ. (ԼԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ՝ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԳԻՏԱԿ

Ծանրակշիռ է անվանի հոգևորական ու մանկավարժ, գրական-հանրային գործիչ, բանահավաք և ազգագիր Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի դերը ի նպաստ հայ բարբառագիտության զարգացման: Սրվանձտյանցն ինքը քաջագիտակ էր արևմտահայ բարբառներին: Նրա մայրենին Վանի բարբառն էր, սակայն աշխատանքի բերումով ապրել և շրջագայել էր Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում՝ Մուշ, Կարին, Ակն, Բաղեշ, Խարբերդ, Ամասիա, Սեբաստիա, Տրապիզոն և այլուր՝ ի մոտո ծանոթանալով հայերենի տարածքային տարբերակներին:

Մեղրակ Ապաճյանը գրում է. «Ինչ անգնահատելի ծառայութիւն որ մատոյց Կոմիտաս վարդապետ երաժշտութեան մարզին մէջ հայ գեղջուկ երգերու իր զմայլելի ծաղկաքաղով, նոյնը ըրած է Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց գաւառահայ գրականութեան տեսակէտէն» («Էջեր հայ գրականութենէն», հ. Ա, էջ 6): Իրոք, «գաւառահայ գրականութեան» այդ հատընտիր նմուշները՝ «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» (1874 թ.), «Հնոց և նորոց» (1874 թ.), «Մանանայ» (1876 թ.), «Թորոս Աղբար» (1879 թ.), «Համով-հոտով» (1884 թ.), «Հայաստանի ճամբորդ» (1884 թ.) «հայ բանահյուսության լավագույն նմուշները հայտնաբերելու և հրատարակելու առաջին փորձերը եղան: Միննույն ժամանակ դրանցով էր, որ հիմք դրվեց հայ ազգագրությանն ու բանագիտությանը» (Է. Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 2008, էջ 27): Գ. Սրվանձտյանցի բանահյուսական նյութերը պարբերաբար լույս էին տեսնում նաև «Օրուան խնդիրներ» հոդվածաշարով, «Արծուի Վասպուրական», «Լրատար արծուիկ Տարօնոյ», «Լումայ», «Արեւելեան մամուլ», «Բազմավէպ», «Ազգագրական հանդէս», «Կռունկ Հայոց աշխարհին», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում՝ հետագայում հավաստի աղբյուր դառնալով բառարանագիրների համար:

Ավետիս Ահարոնյանը, բարձր գնահատելով այդ հրապարակումները, գրում է, որ Գ. Սրվանձտյանցը. «...Շատ կանուխէն ըմբռնեց, թէ հայ վարդապետի մը պարտականութիւնն էր մտածել նաև խեղճ, տգէտ ժողովուրդին սրտին համար: Այդ պարտականութիւնը կատարելու համար գաւառացի վարդապետը պատրաստեց գրքեր գաւառական բարբառով» («Հայրենիք», 1892, հ. 306): Այդ գրքերին կից Գ. Սրվանձտյանցը ստեղծում էր բարբառային բառարանների մասնական տարբերակներ՝ բաց առնելով թուրքերեն բառերը: Այդ մասին նա գրում էր. «Ինձ ոմանք առաջարկած են գաւառական բառարան մը յօրինել, բայց ես աւելի բնական կը գտնեմ, որ այսպէս մասն-մասն՝ գրուածքներու մէջ առնուածները դրուին, յորոց յետոյ կրնայ կազմուիլ գոհացուցիչ գործ մը» («Համով-հոտով». Քանի մը խօսք գաւառական բառերու վրայ): Բարբառային բառաշարքերից բացի՝ երբեմն գրական արևմտահայերեն շարադրանքում հրնթացս

բացատրվում են դժվարըմբռնելի բառերը, կամ տրվում են բարբառային տարբերակները: Օրինակ՝ «Վանայ Այգեստանք, որ տեղական բարբառով կ'ըսուին Էգեստար» («Մանանայ»):

Հայ բարբառագիտության համար կարևոր այդ նյութերի մասին Հ. Աճառյանը գրում է. «Սկսեալ 80-ական թուականներէն՝ գաւառական կեանքի ուսումնասիրութեան, ազգագրագիտութեան և բարբառագիտութեան անուան տակ յօդուածներու, ժողովրդական երգերու, ուսումնասիրութիւններու, գաւառական հաւաքածուներու և բառացուցակներու ծով մ'է, որ կը թափի օրաթերթերու, հանդէսներու և առանձին հատորներու մէջ: Նոյն իսկ կ'սկսին առանձին թերթեր՝ «Բիւրակն» և «Ազգագրական Հանդէս», և «Էմինեան ազգագրական ժողովածու»-ն, որ նպատակ կ'դնեն հայ գաւառական կեանքի ու բարբառներու ուսումնասիրութիւնը» («Հայերէն գաւառական բառարան, էջ 7): Բարբառային նյութերի այդ ծովից տարբեր հեղինակների բարբառագիտական աշխատություններում Գ. Սրվանձտյանցի բնագրային օրինակները և բառացանկերը, ըստ հրատարակության տարիների, տեղաբաշխվում են հետևյալ կերպ.

1. Նախ՝ Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտութիւն» (Մոսկուա - Նոր-Նախիջեւան, 1911 էջ 120) աշխատության «Մուշի բարբառը» բաժնում նշում է Մուշի բարբառով գրված մի շարք ուսումնասիրություններ, որոնց թվում՝ Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց...», «Մանանայ», «Համով-հոտով», «Արեւելեան մամուլ»-ում տպագրված «Հանդէս թոչնոց» (1884, էջ 389-392) նյութերը: Նույն աշխատության «Վանի բարբառը» բաժնում հղում է Վանա բարբառով գրված երեք աշխատություն՝ «Գրոց ու բրոց...», «Մանանայ», «Համով-հոտով»: Բարբառային նյութերի տեղաբաշխումը Հ. Աճառյանն այսպէս է պարզաբանում. «Ամէն մի գլխի վերևում յիշուած են այն գլխաւոր գործերը, որոնցից օգտուել եմ նոյն գլուխը կազմելիս, որոնք որ ցանկանում են ունենալ աւելի մանրամասն տեղեկութիւններ, պէտք է դիմեն նոյն աղբիւրներին» («Պատմութիւն հայոց նոր գրականութեան, Վաղարշապատ, պր. Ա, 1906, էջ 4):

2. Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բան» կոչվող բարբառագիտական բառարանում (1912 թ., Վաղարշապատ) ընդգրկված են նյութեր «Հնոց և նորոց», «Գրոց ու բրոց...», «Մանանայ», «Թորոս Աղբար», «Շուշան Շաւարշանայ» գործերից:

3. Հ. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարան»-ում Գ. Սրվանձտյանցի նյութերն առանձին նշում չունեն, քանի որ, ինչպէս նշում է բառարանի հեղինակը, հնարավոր չէ բոլոր նյութերը, նաև՝ հեղինակներին, հիշատակել: Այդ բացը լացնելու համար անվանի լեզվաբանը կազմել է «Հայագիտական Մատենագիտություն», որում ի մի է բերել 1500 անուն:

4. Հ. Աճառյանը «Քննություն Վանի բարբառի» գրքում հղումներ ունի «Գրոց ու բրոց...», «Համով-հոտով», «Մանանայ» ժողովածուներին, «Լումայ» հանդեսում տպագրած «Գաւառական երգեր»-ին, «Արեւելեան մամուլ»-ում տպագրված «Գաւառական ժողովրդական երգեր»-ին (1883 թ., էջ 440, 465-468, 1884 թ., էջ 584-588), «Բազմավէպ»-ից՝ «Վանեցոց երգ կաքաւու» (1850 թ., էջ 230), «Ազգագրական հանդէս»-ից՝ «Վանեցոց սիրոյ երգ» (ԻԵ, էջ 108), «Արծիւ Վասպուրական»-ից՝ «Վանեցուոց քանի մի առածներ» (1861 թ., էջ 32) ևն:

5. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի Բառարանագրության բաժնի աշխատակիցների կազմած «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում (կազմողներ՝

Գ.Գասպարյան, Թ. Չիլինգարյան, Ա. Քոչոյան, Հ. Կոստանյան, Ա. Հակոբյան, Փ.Սարգսյան, Ա. Գրիգորյան, Երևան, 2001-2012 թթ.) բազմաթիվ բնագրային օրինակներ կան՝ Սրվ. համառոտանշմամբ:

Յակոբ Չոլաքեան, բ.գ.դ. (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ ԳՐԱՌԱԾ «ԲԻԻՐԱՊԱՏԻԿԸ» ՀԵՔԻԱԹԻՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Գարեգին եպս. Սրուանձտեանցի գրի առած «Բիրապատիկը» («Մանանայ», 1876 թ.) կը նկատուի հայ ժողովրդական շատ սիրելի հեքիաթներէն մէկը, թարգմանուած է շարք մը լեզուներու, եւ, որքան նկատած եմ, տեղ գտած է արեւմտահայ եւ սփիւոքահայ բազմաթիւ դասագիրքերու մէջ: Անիկա հայ մարդու բարեպաշտութիւնը բացայայտող հեքիաթ մըն է: Քեսապի բարբառով իմ գրառումներուս մէջ հանդիպած եմ քանի մը իրապատում հեքիաթներու, որոնք խորքի եւ ձեւի առնչութիւններ ունին այս հեքիաթին հետ: Անոր դրուագներէն ոմանք, ինչպէս՝ փառք տուող ծերունին, ապաշխարող գողերը, պարտիզպանը, մինչեւ մէջք պատին մէջ թաղուած տերտերը, կարասի ոսկիին՝ դեղին հողի վերածուիլը, կը կրկնուին տարբեր հեքիաթներու մէջ: Ուղղակի տարբերակ կարելի է նկատել «Աստուած մէկ տուողին հարիւր կու տայ» հեքիաթը (արեւմտահայերէնի վերածումով հանդերձ տե՛ս «Քեսապ», Բ. հատոր, Հալէպ, 1998, էջ 415), որ գրի առած եմ 1970-ին Քեսապի Վերի Պաղճաղազ գիւղէն Շաշ Մինաս Սարամազեանէն (ջուրջ 65 տարեկան), Չալմա կոչուող արօտավայրին մէջ մեր հանդիպման ընթացքին:

Սրուանձտեանցի հեքիաթին գլխաւոր դերակատարներն են մարդը ու գիւղի քահանան: Շաշ Մինասի հերոսներն են մարդը եւ բողոքական պատուելին: Ասիկա պայմանաւորուած է անով, որ շրջանին մէջ 1850-կաններէն ետք կազմաւորուած են աւետարանական եկեղեցւոյ քանի մը մեծ համայնքներ: Հոս գործողութեան վայրերը տեղայնացած են յատուկ տեղանուններով: Մարդը ամէն Կիրակի Վերի Պաղճաղազ գիւղէն պաշտամունքի կ'երթայ Գարատուրանի աւետարանական եկեղեցին: Օր մըն ալ մարդը կը բոլոքէ պատուելիին, թէ «ուր է, կ'ըսէիր որ Աստուած մէկի տեղ հարիւր պիտի տայ, ես բոլոր ունեցածս տուի, ա՛լ բան չունիմ տալու, բան մը չտուաւ»:

– Համբերէ, որդիս,- կ'ըսէ պատուելին,- հաւատա, պիտի տայ:

«Բիրապատիկ»-ին մէջ մարդը կ'երթայ Բիրապատիկին հանդիպելու: Այդ ճամբան հաւատքի ու բարեպաշտութեան ճամբան է՝ եկեղեցւոյ ցոյց տուած ճամբան: Մինասի պատմածին մէջ «Բիրապատիկ»-ին փառք տուող մարդուն, քառասուն գողերուն եւ պարտիզպանին դրուագները չկան: Մարդը կը շարունակէ եկեղեցի յաճախել ու կը շարունակէ հաւատալ պատուելիի խօսքին, թէ Աստուած մէկի տեղ հարիւր պիտի տայ: Վախճանական գործողութիւնը, որ տեսիլքի ձեւով կը ներկայանայ եւ ունի

հրաշապատումի տարրեր, հետեւեալ կերպ կը պատահի. «Կիրակի մը մարդը եկեղեցիէն տուն վերադառնալու ճամբուն վրայ սաստիկ անձրեւի կը բռնուի ու կը մտնէ Չալմայի աղբիւրի քով, սօսի ծառին փորոքին մէջ: Անկէ կը նկատէ, որ աղբիւրին տանիքը մէկը նստեր՝ ոտքերը դրեր է գուռին մէջ: Արձանի պէս մէկն է՝ ճերմակ մօրուքով: Անդիէն ձիաւոր մը կը մօտենայ ու տեսնելով աղբիւրի տանիքին վրայ նստած մարդը, կ'ըսէ անոր.

– Հա, Աստուած ըսածնին դու՞ն ես: Ինչպէ՞ս Աստուած կ'ըլլաս, որ չարժողին առատ կու տաս, իսկ արժողին ոչ մէկ բան: Կայ մարդ գիշեր-ցերեկ երկրպագութիւն կ'ընէ քեզի, իսկ դուն զինք անօթի կը ձգես: Ըրած անարդարութիւնդ շատ եղաւ այլեւս, կա՛մ բոլորին հաւասար տուր, կա՛մ ոչ մէկուն՝ ոչ մէկ բան պէտք չէ...

Կ'ըսէ ու թուրը քաշելով կը յարձակի մարդուն վրայ:

Փորոքին մէջ նստած մարդը տեղէն կը պոռայ.

– Սպասէ՛, մի՛ սպաներ, բարեկամ, այդ մարդը ինձի ալ պարտական է:

Տեղէն կը ցատկէ ու աչքը կը բանայ, որ ո՛չ արձան կայ, ո՛չ ձիաւոր, ոտքին առջեւ, փորոքին մէջ տոպրակ մը կը տեսնէ, կը բանայ կը նայի՝ ոսկի»:

Այս վախճանական գործողութեամբ հաւատացեալ մարդը կը վարձատրուի, իսկ ձիաւորը՝ ոչ, որովհետեւ չի հաւատար Աստուծոյ արդարադատութեան, չի հաւատար որ Աստուած արդար շնորհաձիր է: Յաջորդ կիրակին պատուելիին հարցումին, թէ «Ի՞նչ կայ, քեզ շէն ու պայծառ կը տեսնեմ», մարդը կը պատասխանէ.

– Դուն ըսիր, թէ Աստուած մէկին տեղ հարիւր կու տայ, սխալ ըսեր ես, Աստուած մէկին տեղ հազար կու տայ:

Կարելի է եզրակացնել, որ Գարեգին Սրուանձտեանցի հեքիաթը իր տեսակին մէջ առանձին չի փասար. հայ ժողովրդական հեքիաթներուն մէջ կարելի է գտնել նաեւ այլ տարբերակներ:

Արմեն Պետրոսյան, ք.գ.դ. (ՀԱԻ)

ԷՊՈՍԻ ՄՇԵՐԸ ԵՒ ՄԻՀՐ ԱՍՏՎԱԾԸ

Այն մասին, որ «Սասնա ծռեր»-ի Մհերը Միհր աստծո կերպարի հնարավոր ժառանգն է, գրել է դեռնս Գարեգին Սրվանձտյանցը Էպոսի՝ իր առաջին գրառման հրատարակության մէջ: Միհրի (հնդ-իրանական՝ Միթրա) պաշտամունքը, սկսած Աքեմենյան դարաշրջանից, նշանակալի տարածում է ունեցել Հին Արևելքում: Հայաստանում Միհրի պաշտամունքը որոշակի առանձնահատկություններ ուներ: Այսպէս, եթէ այլուրեք նա նույնացվում էր հունական արևի աստվածներ Ապոլլոնին և Հելիոսին, ապա Հայաստանում՝ ստորերկրյա կրակի և դարբնության աստված Հեփեստոսին, այսինքն՝ կերպարով և գործառույթամբ որոշակի տարբերվում էր իր իրանական անվանակցից: Մ.թ. 1-ին դարից՝ Միհր-Միթրայի պաշտամունքը, թերևս՝ Հայաստանից, անցնում է Հռոմեական կայսրություն, որտեղ այն շուտով ամենալայն տարածում է ստանում (այսպէս կոչված՝ «արևմտյան» կամ «հռոմեական» միթրաիզմ):

«Մասնա ծռեր» էպոսի ավարտին՝ Փոքր Մհերը մտնում է Վանա բերդի մերձակա լեռնագոտու «Ագռավու քար» ժայռի «Մհերի դուռ» կոչվող քարե «դարպասից» ներս՝ ժայռի ներսի երևակայական այրը, և պետք է դուրս գա այնտեղից, երբ արդարությունը հաղթանակի, և աշխարհը բարեբեր դառնա: Մինչ այդ, նա որոշ տոն օրերի դուրս է ելնում այդ քարե դռնից և նորից վերադառնում իր ժայռեղեն կացարանը: «Մհերի դուռ»-ը իրականում մ.թ.ա. 9-րդ դարի վերջին քառորդի ուրարտական հսկայական մի արձանագրություն է: Արձանագրության մեջ այն անվանվում է «Խալդիի դարպաս»: Ժայռին փորագրված այդօրինակ «Խալդիի դարպաս»-ները միայն Վանի թագավորությանը բնորոշ պաշտամունքային հատուկ կառույցներ էին: «Մհերի դռան» և «Խալդիի դարպաս»-ների նույնությունից հետևում է Մհերի և Խալդիի կերպարային նույնությունը:

Ըստ Մանուկ Աբեղյանի՝ Մեծ Մհերն «իսկապես կրկնություն է Պատիկ Մհերի, և նրա վրա պատմաճանաչող Սանասարի և Դավթի վրա պատմված միջադեպերից կազմված մի կրկնություն է միայն»: Միակ կարևոր առանձնահատկությունն, ըստ Աբեղյանի, առյուծի սպանությունն է, որը, կարծում ենք, առյուծաձև՝ «առյուծի տեսք ունեցող» բառի «ժողովրդական ստուգաբանությամբ» աստվածաշնչյան Մամսոնի պատմության վրա ձևավորված հիշողությունն է առյուծ-Խալդիի (հռոմեական միթոսիզմում էլ՝ Առյուծը նվիրագործության չորրորդ աստիճանն էր): Մեծ Մհերի կերպարում կա ևս երկու առանձնահատուկ մոտիվ՝ ցլի սպանությունը և հաշտության կնքումը հակառակորդի հետ, որոնք, ի միջի այլոց, արևմտյան Միթոսայի առասպելաբանության կարևոր դրվագներից են:

Հայկական Միհրը պետք է որ ունենար իր բնիկ հայկական նախորդը: Սեբեոսի պատմության առաջին գլխում Ծովք - Անգեղ տան իշխանների տոհմաբանությունը ներկայացվում է այսպես. Հայկի տոհմից Փառնավազի որդիներն էին Բագամը ու Բագարամը, որոնց սերունդները «ժառանգեցին զժառանգութիւնս ի կողմանս արևմտից, այս ինքն է Անգեղ տուն»: Բագարամը կոչվել է նաև Անգեղ, «գոր ի ժամանակին ազգ բարբարոսացն աստված կոչեցին»: Բագարամ անունը բանասերները սրբագրում են Բագարատ: Այս անունները ծագումով իրանական են. Բագարատ (Bagadāta) նշանակում է «աստծո տուրք», ընդ որում խոսքը վերաբերում է Միհր աստծուն (Հ. Աճառյան): Խորենացու «Պատմության» մեջ (II գիրք, Ը.) Անգեղ-տան էպոնիմը Տուրք Անգեղեան է (որոշ ձեռագրերում՝ Տորք Անգեղեայ)՝ Հայկի թոռ Պասքամի որդին, Մեծ Հայքի արևմուտքի առաջին կուսակալը: Անգեղ-Բագարատ «Բագա աստծու տուրք» և Տուրք Անգեղեայ «Անգեղ աստծու տուրք» անունները, որտեղ տուրքը կարող է մեկնաբանվել որպես «տվածք/ստեղծածք», այսինքն՝ «Անգեղի որդի», համադրելի են, ինչը ցույց է տալիս նրանց համապատասխանությունը (Մ. Աբեղյան): Այստեղ հայրանունը դարձել է մականուն, ինչպես մեզանում ընդունված է ասել Տուրք/Տորք Անգեղ՝ Անգեղյայի փոխարեն: Եւ եթե Բագարատը մեկնաբանվում է որպես «Միհրի տուրք/որդի» ապա Անգեղը ներկայացնում է Միհրի հայկական նախորդին, որը վերակազմության մեջ պատկերանում է որպես բնիկ հայկական անունով մեծ աստված:

Աննա Պողոսյան (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ՝

«ՌՈՍՏԱՄ ՁԱԼ» ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՌՈՂ

Ինչպես «Սասնա ծռեր»-ի, այնպես էլ հայ-իրանական «Ռոստամ Ձալ» բանահյուսական ստեղծագործության գիտական գրառման պատմությունը սկսվում է նոր ժամանակներում հայ բանագիտության հիմնադիր Գարեգին Էպիսկոպոս Սրվանձտյանցով (1840-1892): Առաջին՝ բավական սեղմ ծավալով պատումը Սրվանձտյանցը հրատարակել է Կ. Պոլսում՝ իր «Համով-հոտով» ժողովածուի մեջ 1884-ին՝ «Սալմանն ու Ռոստոմ» վերնագրով (վերահրատարակումը տե՛ս Երկեր, հ. 1, էջ 464-465): «Ռոստամ Ձալ»-ի առաջին այս տարբերակը Սրվանձտյանցը զետեղել է հեքիաթների մեջ («Ճաշակ երրորդ». Քանի մը հեքիաթներ, ԺԳ. «Սալմանն ու Ռոստոմ»), բայց և այնպես հետագա հետազոտողները այն համարել են վեպ կամ էպոս:

Ձեկուցման սկզբում փորձում ենք ճշգրտել տերմինների գործածությունը. իբրև բանահյուսական ստեղծագործություն՝ «Ռոստամ Ձալ»-ը դժվար է համարել էպոս. թե՛ ծավալային առումով և թե՛ բովանդակային էությամբ այն միջին դիրք է զբաղում էպոսի և կարճ վիպասքի կամ էպիկական պատմության միջև: Մյուս կողմից, սխալ չեն այն հետազոտողները, որոնք «Ռոստամ Ձալ»-ը համարում են էպոս, քանի որ այն որոշ հատկանիշներով մոտենում է էպոսին: «Ռոստամ Ձալ»-ի որոշ պատումներ էլ գրեթե նույնանում են հրաշապատում էպիկական կամ դյուցազնական հեքիաթներին: Այդ իսկ պատճառով, երկու ծայրահեղությունների մեջ չընկնելու համար, կօգտագործենք վիպաշար տերմինը՝ «վիպվող շարք» իմաստով:

Ձեկուցման մեջ փորձ է արվում քննության ենթարկելու Գարեգին Սրվանձտյանցի գրառած առաջին տարբերակի վիպական արվեստի կարևոր շեշտերը (խոսքարվեստ՝ լեզվական, ոճական)՝ «Ռոստամ Ձալ»-ի մեզ հայտնի տարբերակների, «Շահնամե»-ի և «Սասնա ծռերի»-ի հետ նմանությունների ու տարբերությունների ընդհանուր համեմատությամբ:

Արուսյակ (Վեներա) Սահակյան, ք.գ.թ. (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ

ՀԱՅ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

19-րդ դարի առաջին կեսից սկսած՝ բոլոր քաղաքակիրթ ազգերի մեջ սկիզբ էր առել մի երևույթ, որն աննախադեպ էր. ուշադրություն բանավոր ավանդների նկատմամբ: Այդ շարժումը հայոց մեջ ո՛չ միայն ներդրվեց և սկիզբ տվեց բանահավաքությանը և բանագիտությանը, այլև ուղեկցվում էր օտար բնակալների դեմ ազգային ազատագրական շարժումներով: Եւ հայոց աննախադեպ իրականությունը պիտի առաջադրեր ազգի մեծերի լայնածիր գործունեության պահանջ: Ազգի երեք ընտրյալ մեծեր՝ Ղևոնդ Ալիշանը, Խրիմյան Հայրիկը և Գարեգին Սրվանձտյանը, այն հսկաներն էին, որոնց ծնեց ազգը: Մի քիչ ավելի ուշ ծնվեց չորրորդ հսկան՝ Կոմիտասը: Խնդիրները որքան որ բազմաբովանդակ էին, նույնքան և՛ անհետաձգելի:

1. Ազգային կրթության և դաստիարակության հարցը, խնդիրը, որն ուսումնասիրության ոլորտի մեջ է ներառվում Սրվանձտյանի կողմից:
2. Գիտության զարգացման խնդիրը:
3. Վերոնշյալ խնդիրներին հարակից բազում խնդիրներ, որոնք առաջադրվել էին դեռևս 5-րդ դարից սկիզբ առնող հայ պատմագրության մեջ և դրա ամենահզոր ներկայացուցիչ քերթողահայր Մովսես Խորենացիով: Որո՞նք էին այդ հարակից խնդիրները.
 - Մովսես Խորենացու և նրա «Հայոց Պատմության» վերաբերյալ Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրությունն արդեն իսկ փայլուն սկիզբ էր խորենացիագիտության հիմնադրման գործում: Անգամ բանավոր ավանդական ժառանգության ժանրերը՝ վեպ, առասպել, առաջադրվում և ճշտվում էին Խորենացիով: Գարեգին Սրվանձտյանի երկերում այդ ժանրերի ուսումնասիրությունն ու ճշգրտումն ավելի քան բազմաբովանդակ է:
 - Տակավին Մովսես Խորենացուց հայտնի ժողովրդական վեպերի գրառման, ուսումնասիրության և հրատարակման հետ կապված խնդիրների և՛ առաջադրման, և՛ լուծման, ինչպես և ժանրերի հստակեցման գործում Գ.Սրվանձտյանի դերը ո՛չ միայն նշանակալից, նաև կենտրոնական է:
 - Մյուս խնդիրը, որ Սրվանձտյանի ուշադրության կենտրոնում էր և ուսումնասիրության դաշտում, հայոց բարբառներն են և դրանց հատուկ ուսումնասիրությունը՝ սկսած սեպագիր արձանագրությունների լեզվից մինչև երգեր, առած, ասացվածք և ծես:

Լիլիթ Միմոնյան, պ.գ.թ. (ՀԱԻ)

ԱՐԴՅՈՒՔ Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑՆ Է «ՄՇՈՅ ԱՇԽԱՐՀ» ՀՈՒՎԱԾԱՇԱՐԻ ՀԵՂԻՆԱԿԸ

«Լուսնայ» հանդեսը 1897-1899 թ. իր համարներում տպագրել է մի հոդվածաշար՝ «Մշոյ աշխարհ» ընդհանուր վերնագրով՝ առանց հեղինակի անունը նշելու: 1897-ի Բ. գրքում խմբագրականի մեջ (խմբագիր՝ Գյուտ Աղանյանց) նշվում է, որ նյութը հայտնաբերվել է Գ. Սրվանձտյանցի արխիվում: Սակայն իրենք խուսափել են հրատարակել այն նրա անունով՝ ենթադրելով, որ հեղինակը Պողոս Թովմայանցն է, որին իր «Գրոց ու բրոց...» գրքում հիշատակում է ինքը՝ Գ. Սրվանձտյանցը՝ որպես անտիպ մի երկի հեղինակի:

Ուշադիր ուսումնասիրելով «Մշոյ աշխարհ» աշխատության ոճը, հղումները և դրանց համապատասխանությունները Գ. Սրվանձտյանցի աշխատություններին, ինչպես նաև փոքրաթիվ ակնարկներն առ այն, որ ուսումնասիրությունները կատարվել են երկու տարվա ընթացքում, զեկուցման մեջ առաջ է քաշվում այն գաղափարը, որ տվյալ ստեղծագործության հեղինակը Գ. Սրվանձտյանցն է: Ընդ որում, «Մշոյ աշխարհ»-ը հեղինակի վաղ աշխատանք է, որի մեջ դեռ չեն ձևավորվել իր պատկերացումներն այն մասին, թե ինչպես և ինչն է հատկապես անհրաժեշտ հավաքել և գրանցել: Այս երկի մեջ տեղ են գտել այնպիսի կոահուսներ, որոնք նա հետագայում զարգացրել է իր ավելի հասուն աշխատանքներում:

Մյուս կողմից, Պողոս Թովմայանցի այլ աշխատություններ դեռևս հայտնի չեն, թեև կարելի է ենթադրել, որ այդ հեղինակին է պատկանում «Արծուի Վասպուրական» հանդեսի 1862-1863 թթ. համարներում հրատարակված «Տեսարանք հայրենի աշխարհաց. Բաղէշ» հիմնավոր, բայց անստորագիր և անավարտ աշխատությունը: Քանի որ հենց այդ տարիներին է վերաբերում Գ. Սրվանձտյանցի ծառայությունը Մշո Ս. Կարապետ վանքում, ուրե՛մս և՛ «Մշոյ աշխարհի տեղագրությունը» աշխատության համար կատարված բանահավաքչությունը, տրամաբանական է, որ Սրվանձտյանցը հիշատակեր այդ հեղինակին: Այդուհանդերձ, «Մշոյ աշխարհ» աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է ինչպես Արևմտյան Հայաստանի մեկ հատվածի մշակույթի ուսումնասիրության, այնպես էլ Գ. Սրվանձտյանցի գրչի վաստակը դիտարկելու համար: Անշուշտ, խնդրի վերջնական լուծման գործոն պիտի լինի «Մշոյ աշխարհ» աշխատության բնագրի ձեռագրի համեմատությունը Գ. Սրվանձտյանցի ձեռագրի հետ:

Լուսինե Վարդանյան, բ.գ.թ. (ԳԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԵՐԿՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՏԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գարեգին վրդ. Սրվանձտյանցը գրականության աշխարհ մուտք է գործել թատերգություններով՝ «Ողբերգութիւն Մեծին Սահկայ Պարթեւի եւ անկուճա Արտաշրի Արշակունւոյ» (1860-70-ական թթ.) եւ «Շուշան Շաւարշանայ» (1875 թ.): Դրանցից առաջինը գրվել է ընկերների համահեղինակությամբ: Երկրորդ թատերգությունը՝ «Շուշան Շաւարշանայ»-ը հեղինակային եսից լիովին չանջատված մի ստեղծագործություն է, որում ընթերցող Սրվանձտյանն աշխարհը տեսնում է սիրելի գրքի հայտնած ճշմարտության միջով, տվյալ գրքի՝ իր համար սրբազան նշանակությամբ բացատրում ազգային զգացմունքին ձուլված անձնական ապրումը:

Մինչ այժմ երկու ստեղծագործությունները քննարկվել են որպես գրականության պատմության իրողություն և դիտարկվել ժամանակի պատմական և քաղաքական իրավիճակի համապատկերում: Այդպես է Արամ Ղանալանյանի հեղինակած «Գարեգին Սրվանձտյան» հոդվածում («Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964): Այդպես է նաև Էմմա Կոստանոյանի «Գարեգին Սրվանձտյանց» մենագրության մեջ (Երևան, 2008) կամ նուն հեղինակի հետևյալ երկու հոդվածներում՝ «Գարեգին Սրվանձտյանցը և ազգային-ազատագրական շարժումները» (ԼՀԳ, 1970, № 1, էջ 18-25), «Գ. Սրվանձտյանցի լուսավորական գործունեությունը» (ՊԲՀ, 1970, № 1, էջ 187-196): Ըստ նշված ուսումնասիրությունների՝ թատերգությունների գրության շարժառիթը, առանց որի չի լինում պատմական երկ, 1862 թ. Զեյթունի ապստամբությունն էր, որով ոգեշնչված էր Սրվանձտյանցը և «Արծուի Վասպուրական»-ի էջերում հանդես էր գալիս մարտնչողներին քաջալերող հոդվածներով: Հայ երիտասարդներին ուղղված նրա կոչերն ազգը միավորելուն, միական և միագաղափար դարձնելուն էին միտված, ինչն արտացոլված է հատկապես առաջին «Ողբերգութիւն Մեծին Սահկայ Պարթեւի...» գործում: Սակայն, այդ ամենով հանդերձ, պակաս կարևոր չէ նաև այս երկու երկերի, հատկապես «Շուշան Շաւարշանայ»-ի գեղարվեստական գործառույթը, որի ազդեցության ոլորտն ազգային ինքնությունն է կամ դրա արթնացման ընթացքը, մանավանդ որ «Շուշան Շավարշանայ»-ն ինքը Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց

պատերազմին» մատյանի պատմագործառական տիրույթում է: Սրվանձտյանցը շատ բարձր է գնահատել այս երկը՝ այն Ավետարանից հետո համարելով մի նոր Ավետարան և ազգային կյանքի կատարյալ չափորոշիչ տեսել նրանում:

«Շուշան Շաւարշանայ»-ի բնագրային վերլուծությունը՝ սկսած թատերգության ընծայականից Բաղդիկ անունով վաղամեռիկ պատանուն մինչև երկի նախերգանքն ու հեղինակի գրականագիտական մեկնություններն իր գործին, որտեղ նա ինքն է վերհանում թատերգության ժանրին պակասող տարրերը՝ «Դերք և դերասան թերի են և առանց կանոնի, նոյնպէս և արարուածները. կապն և հանգոյցը թոյլ են և բացէ բաց. սիրահարի տեսարան երբէք չգար յանդիման...», բացահայտում է հայրենասիրական այս ներբողի փոխանցիկ ապրումն իր ընթերցողին: Միևնույն ժամանակ, Գարեգին վարդապետն իր այս երկով իրականացնում է բնագրից բնագիր փոխանցվող հաղորդումը 5-րդ դարից մինչև իր դարն ու, թերևս, հետո եկողներին: Սույն վերլուծական շարադրանքն այդ ամենին հետևելու մի փորձ է:

Նվարդ Վարդանյան, բ.գ.թ. (ԵՊՀ/ՀԱԻ)

Գ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ՈՐՊԵՍ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԳՐԱՌՈՂ

Հայ ժողովրդական բանահյուսության գրառման և հրատարակման լայնածավալ աշխատանքների սկզբնավորման հարցում անուրանալի է Գարեգին Սրվանձտյանցի դերը: Ինչպես բանահյուսական այլ տեսակների, այնպես էլ հարսանեկան երգերի գրառման և հրատարակման պատմության մեջ կարևորվում և յուրահատուկ ուշադրության են արժանանում Սրվանձտյանցի գրառումները:

Նախքան Գ. Սրվանձտյանցը, հարսանեկան որոշ երգեր արդեն հրատարակվել էին: 1852թ. Վենետիկում Հայր Ղևոնդ Ալիշանի կազմած «Հայոց երգք ռամկականք» երկլեզու՝ հայերեն և անգլերեն ժողովածուում կար հարսանեկան երգերի մի մեծ շարք: Ավելի ուշ այս շարքի երգերը վերահրատարակվում են Գամառ Քաթիպայի «Ազգային երգարան հայոց» (1856 թ.) և Միքայել Միանսարյանցի «Քնար հայկական» (1868 թ.) ժողովածուներում: Առանձին հարսանեկան երգեր լույս էին տեսել նաև «Կոունկ հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի» պարբերականներում (1863 թ. և 1873 թ.), Ա.Սեդրակեանի «Քնար մշեցուոց և վանեցուոց» (1874 թ.) ժողովածուում:

Գ. Սրվանձտյանցի գրառած հարսանեկան երգերը հրատարակվել են իր «Մանանայ» և «Համով-հոտով» ժողովածուներում: Առաջին անգամ «Մանանայ»-ում լույս են տեսնում հարսանեկան երկու երգեր. «Երգ հարսնածութեան» («Թագվորի մեր դուրս էլի» սկսվածքով) և «Գովասանք փեսայի և հարսին» («Թագվոր ի՞նչ բերեմ քեզ նրման» սկսվածքով): Առավել մեծ թվով հարսանեկան երգեր լույս են տեսնում «Համով-հոտով» ժողովածուի «Ճաշակ չորրորդ»-ում՝ «Գեղջկական երգեր» խորագրի ներքո: Սրվանձտյանցը չի խմբավորում այս երգերը մեկ ընդհանուր շարքում, և սրանք ցրված են ժողովրդական երգերի մեջ՝ խառը դասավորությամբ: Նախքան այս ժողովածուում լույս տեսնելը, «Համով-հոտով»-ի հարսանեկան երգերը Սրվանձտյանցը հրատարակում է 1883 թ. «Արեւելեան մամուլ»-ի մի քանի հաջորդական համարներում: Ինչպես հասկանալի է դառնում Սրվանձտյանցի ժլատ մեկնաբանություններից, նա

հրատարակել է իր ոչ բոլոր գրառած նյութերը, այլ, համեմատելով մինչ այդ լույս տեսածների հետ, ընտրել է նրանք, որոնք նոր են և մինչ այդ անհայտ:

Ձեկույցում քննարկում ենք Սրվանձտյանցի հրատարակած հարսանեկան երգերը՝ դրանք համեմատելով մինչ այդ լույս տեսած նմուշների հետ, ազգագրական և բանագիտական քննության ճանապարհով ներկայացնելով երգերի բնույթը, տեսակներն ու առանձնահատկությունները:

Մերգեյ Վարդանյան (ՀԱԻ)

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆԶՏՅԱՆՑԻ ԳՐԱՌԱԾ՝ ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

Գարեգին վրդ. Սրվանձտյանցը 1885 թ. մայիսին Տրապիզոնի թեմի առաջնորդ ընտրվելիս արդեն լայն ճանաչում ուներ, տպագրվել էին նրա «Գրոց ու բրոց...»-ը (1874 թ.), «Մանանայ»-ն (1876 թ.), «Համով հոտով»-ը (1884 թ.), «Թորոս Աղբար»-ը (1879 թ., 1884թ.), վերջինում նա պատմում էր նաև 1878 թ. Տրապիզոն իր 12-օրյա այցելության մասին: Գարեգին վրդ. Սրվանձտյանցը թեմի առաջնորդ է լինում մինչև 1888 թ. մարտը, երբ անակնկալ կանչվում է Կ. Պոլիս: Մինչ այդ նա քանիցս բացակայել էր թեմից, 1886 թ. մեկնել Ս. Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու, 1887-ին՝ Տարոն, ուր մնացել էր շուրջ վեց ամիս: Այսպիսով, նա իր թեմում եղել էր երկու տարուց ավելի, որը բավական մեծ ժամանակ էր բանահյուսական մեծաքանակ նյութեր հավաքելու համար: Ցավոք, Համշենի բարբառով նա տպագրել է ընդամենը 5 երգ, որոնք լույս են տեսել 1886 թ. Կ.Պոլսի «Մասիս» շաբաթաթերթի մայիսի 24-ի, 31-ի և հունիսի 14-ի համարներում: Հրատարակման վերնագիրն է՝ «Ժողովրդական խաղասացութիւնք Կալաֆկայի եւ Միրմենիոյ բնակչաց»: Կալաֆկա գյուղը Տրապիզոն քաղաքից հարավ-արևելք գտնվող Յոմուրայի գյուղախմբում էր՝ ոտքով 5 ժամ հեռավորության վրա: Իսկ Սյուրմենեի գավառակը գտնվում էր Տրապիզոն և Ռիզե քաղաքների միջև, կենտրոնը նավահանգստային Սյուրմենե ավանն էր, որի բնակիչները թուրքեր, լազեր, հույներ և բռնի կրոնափոխված համշենահայեր էին: Գավառակում կային քրիստոնյա և կրոնափոխ հայերի՝ շուրջ երկու տասնյակ գյուղեր, իսկ թե ո՞ր երգը ո՞ր գյուղում է գրառել, ո՞վ է ասացողը՝ Սրվանձտյանցը չի նշել: Ընդհանուր 89 տող կազմող այդ երգերի տակ բանահավաքը գրել է դժվար հասկանալի 30 բառերի բացատրությունները. սա կարելի է համարել Համշենի բարբառի առաջին փոքր բառարանը:

Գրականության և արվեստի թանգարանում պահվող՝ Գ. Սրվանձտյանցի արխիվում կա ևս 2 երգ Համշենի բարբառով, սակայն, կրկին նշված չեն ասացողի և գրառման վայրի մասին տվյալները: Այդ երգերը «Օննոյան ավետիսներ Համշենի գյուղացվոց» և «Հարսանեկան երգ» վերնագրերով հրատարակվել են «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության» (Երևան, 1986) ժողովածուում, որը կազմել և ծանոթագրել է համշենցի ազգագրագետ և բանահավաք Բարունակ Թողլաքյանը: